



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1710

1191

~~1313~~



ԳՍՏԵՐՔ

ԱՌԱՔԻՆԻՔ



Ի Շ. ՊԷԱԴՈՒՍԷ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՏԻՄՈԹԵՆՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԷՍԵԱՆ

Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1510



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1877

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Յայտնի է թէ օրինակը խօսքէն աւելի կազդէ, յայն սակս այս քանի մը փոքրիկ պատմութեանց քարզմանութեանը ձեռնամուխ եղայ համբակ գրչաւս, ուր որ իբրեւ ի հայելոյ կը տեսնուի աստուածապաշտ կենաց երջանկութիւնը, եւ ամբարիտ մարդկան թռուտագոյն ելիք: Յիրաւի շատ անգամ աստուածապաշտ ու բարեպաշտ մարդոց գլխէն զանազան փորձանքներ ու նեղութիւններ պակաս չեն ըլլար. բայց «Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձանաց. եւ զանիրաւս պահել ի սանջանս յաւուրն դասասանի»: Բ. Պէտ. Բ. 9:
Դու մի զարմանար որ երբեմն

ամբարիս մարդիկ կը ծաղկին, կը բարգաւանին, ու ազգի ազգի կենցաղոյս բարեբաղդութեամբ կը լնանին. դու անոնց վախճանին միտ դիր, թէ ո՛ր պիտի երթայ հասնի. անոնց վերջը եղկութիւն ու թուառութիւն է: Երանելին Դաւիթ անգամ՝ որ այնչափ մեծահասակ էր ու բարեպաշտ, որուն ջերմեռանդ մեծահասակութեանը ու բարեպաշտութեանը Իսրայէլացոց թագաւորներէն ոչ մէկը կրցաւ հաւասարիլ, ամբարիսներուն ծաղկիլն ու բարգաւանիլը տեսնալով՝ քիչ մնաց որ իւր անյողորդ հաւաստին սասանութիւն կը բերէր. «Բայց զի իմ փոքր մի եւս սասանեալ էին ռս, սակաւիկ մի եւս գայրակղեալ էին գնացի իմ. նախանձեցայ եւ ընդ անօրէնս, զխաղաղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի, զի ոչ գոյր

վրէպ մահու նոցա». որոնք տարածամ մահուամբ չէին զրկեր իրենց ցանկալի բաներէն: Սակայն ի վերջոյ ի միտ առնելով թէ անուշտ արդարացի հասուցում մը կայ, վերջապէս ամբարիսները պիտի դասուին ու դասապարտուին Ասուծոյ արդար դասասանաւր, կըսէ. «Ասացի ի զուր ուրեմն արդարացուցի զսիրս իմ»: Սաղմ. ՀԲ. 12: «Ի մտի եղի՝ թէ սակայն եւ այս ջան է առաջի իմ, մինչեւ մտից ի սրբութիւնն Ասուծոյ, եւ ի միտ առից զկասարած նոցա»: Սաղմ. ՀԲ. 14:

Մի կարեւորեալ ըլլար, համբերէ ու պիտի տեսնաս թէ՛ արդարոյն ու ամբարսին մէջ տեղը ինչ խտր ու տարբերութիւն կայ:

Ամբարիսները թէեւ սա աշխարհիս մէջ իրենց անօրէնութեանց տոյժը չկրեն, ի հանդերձելումն բիրտ-

պատիկ առաւելութեամբ կրելնուն
սարակոյս չկայ: Երբոր Նաբուգոդո-
նոսոր թագաւորը մեռաւ ու գնաց
ի դժոխս, աշխարհիս սկիզբէն այն
տեղը եղող մեծամեծ թագաւորները
ու իշխանները զարմանալով ելան
կանգնեցան, բարեւ բռնեցին ու
ըսին, «Եւ դու իբրեւ զմեզ ըմբռ-
նեցար»: Եւ. Ժ. 9: Խմաստքեամբ
կը գրէ Մաւսոց աստուածիմաս վար-
դապետն մեր, այսպէս. «Որպէս զա-
րեւ եւ զանձրեւ եւ զամենայն բա-
րութիւնս արդարեւ եւ մեղաւորք ի
միասին վայելեցին, այսպէս եւ
զբաժակ պատուհասին ի միասին
ըմպեն, իսկ իւրաքանչիւրոց պատիւ
եւ պատուհաս առ հանդերձեալն
պահի»:

Աղէկ նշան չէ որ մարդ մը ինչ-
ուան վերջը յաջողութեան ու եր-
ջանկութեան մէջ կրլլայ: Աստուծոյ

մեծագոյն պատուհասը ամբարիւսը
անխրատ քողովն է: Աստուած սի-
րած ծառային երբեմն երբեմն նե-
ղութիւն ու փորձութիւն կը խրկէ,
անոնց հաւաստիք ու բարեպաշտու-
թիւնը փորձելու համար: Բոլոր ար-
դարները նեղութեանց մէջ փորձու-
լով ընտիր գտան. ինչպէս Սողոմոն
կը հրաշաքանէ. «Սակաւիկ ինչ
խրատեալք եւ տեսեալք, զսցեն զմեծ
բարութիւն: Զի Աստուած փորձեաց
զնոսա, եւ եզիտ զնոսա իւր արժա-
նիս: Իբրեւ զուսկի ի բովս քննեաց
զնոսա». Խմաս. 9. 5: Աստուած
երբեմն ամբարիւս մեղաւորաց խըն-
դիրքը եւս կը կատարէ, անոնց սր-
տին ցանկութիւնը կը լեցունէ. եւ
կողորմի եւս. բայց ի՞նչ ողորմու-
թիւն. կողորմի անոնց յարգարա-
ցատմ բարկութեան իւրում: Աս-
տուած անապատին մէջ իւրայէլաց-

ւոց սրհնջանաց ձայնը լսեց, անոնց
բաղձանքը լեցուց, անթիւ բազմու-
թեամբ լորամարգիներ խրկեց. բայց
մինչդեռ անոնց միսը ակռաներ-
նուն մէջն էր, Ասուծոյ բարկու-
թիւնը եկաւ հասաւ վրանին: Այս-
պէս Ասուած երբեմն մեղաւորնե-
րուն յաջողութիւն կուսայ, զանոնք
ի բարձր եւ ի գահ կը բարձրացունէ,
մեծամեծ իշխանութեանց տէր կընէ՝
կամ ժողովրդոց մեղացը բարկանա-
լով, կամ թէ անոնք անտի գահա-
վէժ անկանելով որպէս զի ի սպառ
խորսակին . . . :

Այս ըսածներուս կենդանի օրի-
նակները քիչ շատ հետեւեալ պատ-
մութեանց մէջ կը տեսնուին: Եւ մեր
այս դուզնամեայ երկասիրութեան
նպատակը ոչ այլ ինչ է, բայց եթէ
ընթերցանելեաց հոգեւան զբօսանք
մը մատուցանել. վասն զի պատմու-

թիւնները զբօսցնելով միանգամայն
կը ներսպաւորեն մարդոյս հոգւոյն
մէջ ասուածպատեան ու բա-
րեպատեան սէրն ու գաղափա-
րը՝ որոնք միեակ մարդս կրնան եր-
ջանիկ ընել ի կրկնակի կեանս. եւ
մեր արտին փափաքն այս է, եւ ի
տոյն նուիրեալ են կեանք մեր:



ԴԱՏԵՐՔ ԱՌԱՔԻՆԻՔ

Գ Լ Ո Ի Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԲՕՉԱՄՈՆՏ

Ասպետութեան ասեն Դալեմեան Քօնրադէն կը բնակէր Ջանկանպուրկի ամրոցին մէջ՝ որ Գերմանիոյ հարաւային կողմը կիյնայ: Արհեստ ու բնութիւնը անառիկ բրած էր զանի: Քօնրադէն պատուաւոր, բարեպաշտ ու մարդասէր ասպետ մըն էր: Երբէք հարստահարեալ անձ մը վայրապար անոր օգնութիւնը խնդրած չէր, եւ միշտ պատրաստ էր պատժելու պատժապարտք. Իւր բոլոր հպատակները հօր պէս կը սիրէին զինքը. բայց դրացի ասպետներ՝ որոնք յապիւսակութեամբ կապրէին միշտ, մահու չափ կա-

սէին զինքը, եւ երդուած էին վրէժխնդիր ըլլալ անկէ :

Իւր Բօզալի անուն կինը առաքինասէր կեանք մը կը վարէր. եւ սարապայման եռանդուն սիրով կը սիրէր իւր Ալպերդ ու Բօզամոնս անուն երկու զաւակները՝ որոնք իրեն գեղեցիկ յոյսեր կը խոստանային :

Ի մեծ ցաւ իւր՝ մահը իւր Ալպերս մանչ տղան քառամեայ հասակին մէջ յափեսակեց իւր ձեռքէն, եւ մնաց իրեն միակ Բօզամոնս աղջիկ զաւակը՝ որ դեռ ան ասեմ երկու տարեկան էր : Թէ որ այս սիրուն դրսերիկն ալ մեռնելու ըլլար, կոմսին նոխ ինչքը Հարդէնեան Հանսին կիյնար, որ կատր ըզ Քօնրադէն, եւ պատեմ առքի կսպասէր անոր վիճո հասցնելու :

Իրիկուն մը միւնչդեռ Քօնրադէն իւր աղջիկը գիրկն առած կը պատմէր անոր Ս. Երկրին պատմութիւնները, Մարդէն՝ որ ասպտիկն առաջին զինակիրն էր, մտաւ սրահը, եւ լուր տուաւ Հարդէնեան Հանսին գալը՝ որ կուզէր ամրոցը մտնել :

Ասպտ, ըսաւ Մարքէն, կերելի քէ խօ-

սելիք մը, կամ կարելոր գաղտնիք մը ունի հաղորդելու ձեզ :

Տեսնեմք, ըսաւ Քօնրադէն, գնա իջեցուր շարժական կամուրջը, եւ ընդունէ զինքը արժանավայել յարգանօք, բայց բող մի տար իր հետք ներս մտնալ՝ բաց ի իւր երկու զինակրէն, միւս զինեալ մարդիկը ետ խրկէ :

Շուտ մը ամրոցը մտաւ Հարդէնեան Հանսը : Ողջունեցին զիրար քաղաքավարութեամբ : Ասպտ, ըսաւ Հարդէնեան Հանսը, կուզեմ քեզի հետ քանի մը վայրկեան առանձին տեսութիւն ընել, կարելոր բաներ ունիմ քեզի խօսելու :

Խօսէ, ըսաւ ասպտը, իմ ընտանեացս համար գաղտնի բան մը չկայ :

Սակայն շատ կուզէի որ գործը՝ որուն վրայ պիտի խօսիմ քեզի, մեր մէջը ծածուկ մտաւ բայց որովհետեւ այսպէս քեզի հանելի է, անա քեզի կը ծանուցանեմ իմ այցելութեանս նպատակը : Վերահաս մեծ վտանգ մը կայ առջիդ, քու հին քոնամիդ՝ Զօլէնեան Ֆրանսը որուն ձեռքէն երբեմն իւր աւարը յափեսակեցիր, բազմա-

քի զօրաց գլուխ անցած կուգայ կը մօ-
 տենայ ամբողջ : Կէս գիշերուն վրայ պի-
 տի յարձակի : Ես եկայ քեզի օգնելու : Ժող-
 վէ զինեալ մարդիկդ, եւ քալէ բռնամեացդ
 դէմ : Այս անակնկալ յարձակումդ անոնց
 մեծ շփոթութիւն պիտի պատճառէ : Ես կը
 պահպանեմ ամբողջ . հետս քաջ պատերազ-
 մական զօրաց խումբ մը բերած եմ : Կիկն
 ու աղջիկդ ապահովութեան մէջ պի-
 տի ըլլան :

Այս լուրը անաբեկ ըրաւ Քօնրադէնը ,
 եւ Ռօզալի սոսկալով կը դողար : Ասպէս
 իւր ազգականին վրայ վստահութիւն չու-
 նենալը յայտնեց : Բայց նա գիտցաւ զօրա-
 տը խօսքերով ֆողարկել իւր նենգութիւնը .
 ես կուգամ, ըսաւ, իմ ամենալաւ հաւա-
 սարմութեան օգնութիւնս քեզի մատուցա-
 նելու . հաւատն իմ խօսքերուս, որոնք
 աննենց արեւ կը բղխին :

Քօնրադէնին մարդիկը ժողվուեցան, եւ
 Հարդէնեանին ընկերները մտնան ամբողջին
 մէջ : Ռօզալի իւր պսակակիցը սպառնազի-
 նելու համար օգնած ասերը զգացած ցա-
 տոյն պէս երբէք ցաւ մը չէր զգացած :

Անորո՞ւ նախագագաւորիւն մը զինքը վեր ի
 վայր կը վրդովէր : Ասպէսք տեսնալով անոր
 այլայլութիւնը ոչինչ տեղը ջանաց զանի
 հանդարտեցնել . տեսաւ որ իւր ջանքերն ա-
 տելի եւս անոր տրտմութիւնը կը բորբոքէին :

Կէս գիշերէն քանի մը վայրկեան առաջ՝
 Քօնրադէն զնաց բռնամտոյն դէմ, որ հա-
 կառակ ասպետական օրինաց իւր վրայ
 կը յարձակէր : Շարժական կամուրջը վեր-
 ցուեցաւ . եւ Հարդէնեան Հանսը իւր մար-
 դիկը ամբողջին ամէն մասերուն մէջ բաժնեց :

Քօնրադէն ատելի ապահովութեան հա-
 մար քողուցեր էր իւր հաւատարիմ Մար-
 քէնը որ հսկէ Ռօզալիին ու իւր աղջկանը
 ապահովութեանը վրայ : Ասպետին պսա-
 կակիցը չքողուց զինքը մոլորիլ Հարդէն-
 եանին հրապուրիչ շողմարտար խօսքերէն .
 նախամեծար կրնարէր Մարքէնին խսու-
 րութիւնը՝ որուն որ քաջութիւնն ու հաւա-
 սարմութիւնը կը նանչնար . ուստի ատելի
 կը վստահէր անոր, քան քէ ասպետին :

Երկու ժամէն վերջը լսուեցան զինուց
 շառաչիւնը ու պատերազմողաց սղաղակ-
 ները : Երբալով ազաղակը կը մօտենար

ամրոցին: Զինակիր մը լուր բերաւ Հարդէնեանին թէ՛ Երլանվալի ուղղութեամբը մեծ հրդեհ մը կը տեսնուի: Ասպէս սուկում ձեւացուց եւ յայտնեց Ռօզալիին թէ իւր յատուկ ապահովութեանը համար պէ՛տ է որ աւսարակին մէջ առանձնանայ:

Ռօզալի դէմ կեցաւ. բայց Հարդէնեան խստութիւն կը բանեցունեն, ըսաւ, աւսարակին մէջ մտնալու ստիպելու համար՝ թէ որ դէմ կենալու ըլլաս. վասն զի, քու կեանքդ ինձի վստահացուած է քու պսակակիցդ: Վսանգը կը սպառնայ, եւ քեզի կը մնայ միմակ երթալ աւսարակին մէջ պատասխարիլ, ուր որ ամէն նախասիրներէ ազատ պիտի ըլլաս. արդ, մի դէմ կենար, եւ մանաւանդ մի ստիպեր զիս խստութեան միջոցներ ձեռք առնելու: Ռօզալիին դիմադրութիւնը անօգուտ եղաւ, նոյնպէս եւ Մարքէնին ըրած ցոյցերը. ստիպուեցաւ Ռօզալի իւր Ռօզամոնէս աղջկանը հետ մէկ տեղ երթալ նստիլ աւսարակին մէջ: Ասպէսը ընկերացաւ իրեն եւ ետեւէն դուռը գոցեց: Ռօզալի որոշ կերպով լսեց անոր իւր ընկերներուն ըսելը թէ՛ «Հիմա թռչունները

վանդակին մէջ են, ինչ որ ուզենք կըրնանք ընել:»

Ռօզալի այս խօսքերը լսելով իր ինչ սուկալի վիճակի մէջ գտնուելուն խելամոտ եղաւ. զիտեսաւ որ իւր նենգամէտ ազգակները մասնութիւն մը պիտի պատրաստէ: Գրկեց Ռօզամոնէսը դողդողալով եւ իմացաւ այս շարագուռակ խաղարկութեան նպատակը:

Ասպէսը աւսարակը բողբոլուն պէս խկոյն հրաման տուաւ Մարքէնին որ ամրոցին մէջը տանող զաղտնի նաւբան ցոյց տալ իրեն, որպէս զի պատասխանէ զանի, եւ թե՛նամեաց կողմէն ամէն յարձակումներուն դէմն առնէ:

Մարքէն աներկիւղ պատասխան տուաւ իրեն թէ՛ շատ լաւ կը համարիմ գէտագէտ պատասխարիլ, քան թէ անհնազանդ գտնուիլ իմ տէրջոս՝ որ պատուէր տուած է ինձ երբէք մէկու մը ցոյց չտալ ամրոցին զաղտնի նաւբան:

Այս անվեհեր պատասխանը սասանեցուց ասպէսը. հրաման տուաւ շուտ մը որ անխոհեմ զինակիրը բռնեն ու ստորերեայ բանտի մը մէջ նետեն: Ան աստեղ Մարքէն քաշեց սուրը եւ անագին բարկու-

քեամբ սպառնացաւ իրեն առաջ մօ-
տեցողին :

Սպանեցէ՛ք սա յանդուգնը, պօռաց Հար-
դէկեանը: Եւ շատ մը ասպետներ Մարքէնին
վրայ թափեցան, եւ նա առիւծի նման
ինքզինք պատշպանելով յարձակողներէն
չորսը գետինը փռեց :

Հարդէկեանը չափէ դուրս բարկանա-
լով կանչեց միւս զինեալ մարդիկները, եւ
հրաման քրաւ անոնց Մարդէնին վրայ
յարձակիլ : Հնազանդեցան պատերազմա-
կանները, եւ անոնցմէ երկուքն ալ քաջ
զինակիրին հարուածին սակ ինկան : Բայց
տեսնալով որ պիտի ընկնի անոնց բազմու-
թեանէն, եւ արդէն ազդու վէրք մը առած
բլլալով ձախ կողմի թելին վրայ, քաշուե-
ցաւ ամբողջին սրահներէն մէկուն մէջ եւ
դուռը գոցեց ու ամրացուց հաստատուն նի-
գեղով՝ միտք դնելով որ մինչեւ վերջը
ինքզինք պատշպանէ :

Ուրբ զինեալ մարդիկ, զորս թողուցեր էր
Քօնրադէն ամբողջին մէջ, Մարքէնին դի-
պած անօրէն գործէն զրգոռելով ուզեցին
զանի պատշպանել: Կէսը Հարդէկեանին մար-

դոցը հարուածին սակ կորսուեցան, եւ
միւսները ստորերկրեայ բանտերու մէջ նե-
տուեցան :

Ամբողջին գաղտնի նախքան հանող դուռը
կոտորեցաւ, եւ Հարդէկեանին անձնանուէր
մարդոցմէն բազմութիւն մը պատճառաւ
նշանով հոն լեցուեցան :

Ան ասեմ շարժական կամուրջը վերցուե-
ցաւ, եւ Հարդէկեան հրաման քրաւ որ աս-
պետին վերադարձին զինքը բռնեն ու աշա-
րակին մէջ նետեն: Մարքէն այս սուկալի
խօսքերը լսելով բարկութենէն ակուսները
կը կրճէր :

Առաւօտուն վիրաւորեալ զինակիր մը փու-
րոյ պնդութեամբ եկաւ լուր տալու քէ Քօն-
րադէն չկարենալով բազմութեան դէմ դը-
նել՝ ետ կը դառնայ կուգայ աւերոցը : Իրօք
Քօնրադէն երեւցաւ, եւ Հարդէկեանին զի-
նեալ մարդիկը իսկոյն անոր չորս դին պա-
տեցին :

Մասնութիւն, համ, պոռաց Քօնրադէն
սուրբ քաշելով : Մարդէն բացաւ անասն ամ-
բողջին դուռը ուր որ քաշուեր էր, եւ թեմա-
միները նեղելով եկաւ իւր տէրոջը հետ մի-

ացաւ եւ իմացուց իրեն մասնուած ըլլալը :
Բռնեցէ՛ք երկուէ՛ք մէկսեղ, պօռաց Հար-
դէնեան : Զինեալ մարդիկը միահող յար-
ձակեցան երկու քաջ պատերազմականնե-
րուն վրայ եւ շատ անգամ յեսս մղուեցան .
բայց վերջապէս բազմութիւնը յարբեց ա-
նոնց : Քօնրադէնին զէնները առին վրայէն
եւ Մարբէն զանի պաշտպանել ուզելով
սպանուեցաւ :

Այս հաւատարիմ զինակիրն մահը ցաւօ՛ք
լեցուց սապեօին սիրտը : Հարդէնեան Հան-
սը տարաւ զինքը աշտարակին մէջ փակեց :

Այս դիպումովն քիչ ժամանակ ետք հա-
տաւ Զօլէնեան Ֆրանսը ի Զանկանպուրկ
եւ մասնեց զանի յափշտակութեան : Նոյն
օրը լուր տուեցաւ Քօնրադէնին հպատակ-
ներուն թէ ազատած են իրենց հին տէրոջը
հնազանդելէն, որուն յանցանքները զինքը
փակեցին բանտի մէջ եւ այսուհետեւ կը
պարտաւորին հնազանդիլ Հարդէնեան Հանս
սապեօին :

Քօնրադէնին հպատակները այս լուրն
առնելով շատ տրտնուեցան, վասնզի կը սիրէին
ասպետը եւ կը նանչնային իրենց նոր տէրոջը

անողո՛քնի խստատուութիւնը . բայց չէին
կրնար դէմ կենալ : Ամբողջ պահակեր էր
բազմաթիւ զօրաց խումբ մը, ուստի չէին
կրնար զանի պաշարելու մտաբերել :

Ոմանք մտերնին դիմ իրենց տէրոջը օգ-
նութեան կանչելու, անոր անձնանուէր
բարեկամ եղող մէկ քանի սապեօները . բայց
հարկադրեցան այս խորհուրդը ետ թողելու .
վասն զի ան ասեմն Գերմանիա զանազան
զաղտնի կուսակցութիւններու բաժնուած
լինելով՝ ապստամբութեան խորհուրդներ ի
վեր կերելային . եւ այս սապեօները հար-
կադրած էին բազմաթիւ քրտնախոսք դէմ
դնելու :

Հարդէնեան Հանսը իր անիրաւ ձեռնար-
կութեան յաջող ելքին վրայ գոհ լինելով՝
իւր բարեկամներուն մեծապատասխան հացկե-
րոյթ մը տուաւ : Քօնրադէնին ինչքերը Զօ-
լէնեանին տուաւ, եւ սփայեց զանի որ
զինքը Զանկանպուրկի ժողովարարութեան մէջ
թողու :

Այս դիպումովն եւրոպայի օր ետքը Հարդէ-
նեան Հանսը խոհեմութիւն սեպեց, Քօնրա-
դէնն ու իւր ընտանիքը Զանկանպուրկէն

հեռացունել. Եւ զանոնք կիսաւեր հեռաւոր
ամբոց մը դրկեց, ուր դրին զիրենք զաս
զաս ստորեկրեայ բանսերու մէջ : Բօզալի
մեծ դժուարութեամբ կրցաւ ձեռք բերել
Բօզամոնս աղջկանն իւր հովը մնալը :

Ասպէս միտքը դրաւ որ Զանկապուրկն
իրեն ամարային ամբոց ընէ, եւ ձեռքը իւր
հին ամբոցը բնակի :

Իր նոր հպատակները շուտով զգացին
անոր բնաւորութեան դաժանութիւնը : Կաս-
կածանօք ու մասնութեան երկիւղով ըմբռ-
նեալ, զի որոնց վրայ որ կասկածի կերքար՝ կը
սանջէր, ինքնապետական իշխանութիւն մը
վարելով կը բանտարկէր, ձեծել կու տար ու
կը գլխասէր հպատակները, եւ ամէն տեղ
անուներ նողկալի եղած էր :

Զինքը առաւելապէս սանջողն այն էր որ
չըլլայ թէ օր մը Քօնրադէնին Բօզամոնս աղ-
ջիկը Զանկապուրկի ժողովագորդ ըլլալուն
իրաւունքը գայ ցոյց տալ, եւ զինքը գրկէ իւր
գեղեցիկ ստացուածքներուն մէկէն : Այս
խորհուրդս գիշեր ցերեկ զինքը անհանգիստ
կընէր, եւ ուստի իրեն մտաբերել տուաւ այն
ստակալի գաղափարն որ անմեղ դատարկն

իւր անյագ ցանկութեանը զոն ընէ : Իւր
հաւասարիմներէն երկու հոգի խրկեց ամ-
բոցը, ուր որ ասպէսը, իւր կինն ու աղջիկը
ստապանօք կը հեծէին՝ որ այս անմեղ
դատարկն առնեն իրեն բերեն :

Այս բօբալի լուրը Բօզալիին սիրքը խռ-
վութեամբ լեցուց . իւր զաւակն որ իւր
միակ մխիթարութիւնն էր, քաշել ձեռքէն
առնելը՝ իւր կեանքը քաշել առնել էր,
շատ աղաչեց աղերսեց Հարդէնեանին մար-
դոցը որ իւր աղջիկէն զինքը չգրկեն :

Այս մարդիկը զինքը ապահովեցին թէ՛
ասպէսը կուզէ զանի իւր ասիքանին ար-
ժանաւոր վիճակի մը մէջ դնել, եւ իրեն
պատշաճաւոր կրթութիւն մը տալ. եւ թէ՛ իրեն
ներելի է երբեմն իւր աղջիկը տեսնել. այս
վստահութիւնը քիչ մը մխիթարեց Բօզալիին
սիրքը. եւ յորդահոս արցունքներ քափելով
փարեցաւ իւր աղջկանն եւ օրհնեց զանի :

Շատ ցաւալի եղաւ իրենց բաժանումը,
վասն զի Բօզամոնս չէր ուզէր բաժնուիլ իւր
մօրմէն, եւ քանի որ Հարդէնեանին մարդի-
կը կը մօտենային զինքը սանելու, սուր աղա-
ղակներ ու նիչեր կը փրցուէր. մարդիկը

ձանձրանալով անոր ընդդիմութենէն առանց
 ականջ կախելու իւր ճիչերուն՝ բռնութեամբ
 քաշեցին առին տարին. խղճալի մայրը զըր-
 կուեցաւ իւր միակ գաւակէն ու իւր սիրելի
 պսակակիցէն՝ որոնք երկրիս վրայ եղած
 ամէն բանէն աւելի պատուականագոյն էին:

Վայրենամիտ Հարդէնեանը Ռօզամոնսը
 սպանանելու դիտարութեանը մէջ հաստատ
 կեցաւ. եւ այս սոսկալի գործը Զանկան-
 պուրկի մօտերը եղած հովուի մը յանձնեց:

Ասպետը բերել տուաւ հովիւր, եւ զղան
 իրեն յանձնեց՝ որ կողովի մը մէջ դրեւ ու
 ըմպելիի խմցունելով քնացուցեր էր, եւ հրա-
 ման քաւ որ տանի մօտակայ լճին մէջ նետէ:

Հովիւր գնաց լճին եզերքը, եւ Հարդէ-
 նեանը քիչ մը հեռուէն անոր հետէն կեր-
 քար որ յատուկ իւր աչիովը տեսնայ իր
 հրամանին անբերի կատարումբ:

Հովիւր զանի դիտեց. կողովը նետեց լիւր.
 եւ ասպետին աչիին առջեւ մեծ քարեր դնե-
 լով անոր մէջ ընկղմեց: Այս գործողութիւնը
 լնցունելով մեկնեցաւ անկէ. եւ ասպետը
 ամրոց գնաց:

Ան աստեւ Ռօզամոնսին մահուան լուրը

ամէն տեղ տարածուեցաւ. ասպետը պարսպ
 գերեզմանի մը վրայ տապանաւար մը դնել
 տուաւ, եւ Քօնրադէնին ու իւր կնոջը լուր
 տուեցաւ իրենց աղջկան մահը: Խղճալի-
 ները անհնարին ցաւ զգացին. Ռօզալի բո-
 լորովին անմխիթար էր. եւ ասպետն իւր
 յորդաբուղիս արցունքները չկրցաւ բռնել:

Քօնրադէն ոչինչ տեղը կը յուսար թէ իւր
 անողորմ ազգականը վերջապէս խելա-
 փռելով ազատութիւն կուտայ իրեն: Շատ
 անգամ իւր բանտէն ազատիլը անկէ խնդ-
 րեց, բայց միտ Հարդէնեան ծաղրական
 պատասխան տուաւ, ու ուզեց իւր սիրտ
 ցաւցնելու խօսքերովն եւս առաւել անոր
 քռուառութիւնը բազմապատկել:

Ան աստեւ Քօնրադէն հասկըցաւ որ իւր
 աղաչանքներն օգուտ մը ընելիք չունին, եւ
 սպասեց որ Աստուած ինքնին իւր անմե-
 ղութիւնը յաղթող հանդիսացունէ: Խնդրեց
 միակ ասպետէն որ բոյլ տուի իրէն այն
 բանտին մէջ կենալ՝ ուր որ իւր կողակիցը
 բանտարկուած էր, բայց աս բարեպաշտա-
 կան փափաքն ալ անընդունելի եղաւ:

Տարիները հոլովեցան առանց իրենց վի-

նակին փոփոխութիւն մը դիպելու . եւ արդէն վեց տարին լմնցած եր, երբ վաղուց ի վեր գլխերնուն վրայ կուտակուած մերիկը փարատեցաւ, եւ գեղեցիկ օրեր ծագեցաւ այս բարեսէր ընտանեաց վրայ:

Զօլէնեան քրանսը շատ անգամ խաբուելով Հարդէնեան Հանսէն՝ տաղկացեալ էր այս անգործ մարդուն խարդախութիւններէն . եւ անոր դէմ պատերազմ հրատարակեց:

Այս անակնկալ լուրը վեր ի վայր խոռվեց Հարդէնեանին սիրքը . զիտէր որ իւր հպատակները զինքը կատեն . չէր կրնար անոնց հաւատարմութեանը վրայ վստահ ըլլալ, որոնք օր քան զօր դիպող առթի մը կապատէին անոր հպատակութեան լուծը վրանուն նետելու:

Ինչ որ նախագուշակած էր՝ պատահեցաւ: Այն ինչ Զօլէնեանին յառաջ քալելու ձայնը լսուեցաւ, Հարդէնեանին հպատակները խորհեցան անոր ինքնապետական իշխանութենէն ազատելու կերպը:

Հարդէնեան ժողովեց իւր մարդիկը եւ քաղց քնամուտյն դէմ . բայց իւր մարդի-

կը զինքը բողուցին ու հակառակորդին կողմն անցան, որուն վրայ սաստիկ ցաւ զգաց:

Պատերազմը բացուեցաւ, յաղբուեցաւ, եւ բանտարկուեցաւ:

Երբ Հարդէնեանին յաղբուելուն լուրը Քօնրադէնին բանտարկուած ամրոցը հասաւ, բանտարկելոյն վրայ հսկելու կարգեալ շատ զինեալ մարդիկ, որ ի ծածուկ նպատամատոյց եղած էին իրեն, կոտորեցին իւր երկաթները եւ ազատութիւն տուին իրեն:

Ինչ անպատում ուրախութեամբ այս երկու պապակալիցները զիրենք միմեանց հետ միաբանած տեսան՝ որ վեց տարիէ ի վեր իրարմէ զատուել էին, իրարու թեւ թեւի վրայ իյնալով զրկախառն փարեցին զիրար եւ լիաշուքն գոհութիւն վերառաֆեցին առ բարձրեալն Աստուած, որ իրենց երջանկարար ժամը վերջապէս հարկանել տուաւ: Տառապանաց վեցեակ տարիները մոռցուեցան:

Երբ զիրենք ազատ գտան, մտածեցին առաջիկայ վճանգներուն վրայ՝ որ դեռ

կօպառնար իրենց, եւ խորհրդակցեցան թէ ինչ պէ՛տք է ընել :

Զանանք, ըսաւ ասպետք, շուտով մեր ամրոցը հասնելու. անտարակոյս պիտի գտնանք դեռ մեզի անձնանուէր բարեկամներ. որոնք մեզ պիտի օգնեն մեր ժառանգութիւնը վերստին ձեռք բերելու համար :

Զանչցուելու, եւ իրենց բռնամտոյն հալածմունքներէն ազատ մնալու համար մտան անտարին մէջ, եւ քուփեռու պտուղներ ուտելով անտուր ճանքանքէ գիշեր ցերեկ շարունակ փախցին որ շուտով հասնին :

Չորս օր փախելէն ետքը հասան Զանկանպուրկի մօտերը. եւ երկու մըն յետոյ ունէին ճանապարհորդելու. բայց Բօզալի ան չէր կրնար զիմանալ փախելու, ոտներուն մտքերը սրկրքեր էին, եւ ծանր տեղ մը վրան ուժ չէր բողբօցեր, Քօնրաղէնին թելին կրթնելով յոգնած ու կիսամեռ հասաւ աղբիւրի մը հով, եւ այն տեղ մնաց :

Հազիւ թէ քանի մը վայրկեան կար որ հոն հասեր էին, ոչխարներու հովուի ծաղկահասակ աղջիկ մը եկաւ աղբիւրը, սի-

րուն ակնածութեամբ մը ողջունեց ճանապարհորդները. իւր շնորհալի դէմքը ամենաբազր անմեղութիւն մը կազդէր. եւ Բօզալին չէր կրնար կէտնալ այս սիրուն արարածը հիացմամբ նկատելէն : Թէպէտ եւ իւր հագած լաթերը եւ վիճակը անուր էին, բայց համես կերպարանք մը ունէր. ձայնը փայտիկ, եւ խօսքերը զգայուն : Սիրուն դասերը հրաւիրեց Բօզալին զալ իւր բնակարանը, ուր կը գտնաս, ըսաւ, կարեւոր պաշարներ եւ ուղղեցոյց մը :

Քօնրաղէն շնորհակալութեամբ ընդունեց այս հրաւերը եւ կինը զրկեց բերաւ ծաղկահասակ հովուուհւոյն բնակած գեղը, ուր հովուուհի աղջիկը զանոնք տարաւ աղբասիկ բնակարաններէն մէկը :

Ներս հրամեցէք, ըսաւ անոնց, հոս լաւ ընդունելութիւն կը գտնէք, միեւնակ կը ցաւիմ որ մօրս աչքերը չեստնար. բայց եւ այնպէս մարդավար հիւրասիրութիւն պիտի տեսնէք : Հայրս երկ գնաց, քանի մը օրէն կը վերադառնայ, ինքը գաւառիս մէջ իւր բարեսիրութեամբը պատուաւոր անձ մըն

է. քէ որ հոս եղամ ըլլար շաս ուրախութեամբ կրնդունէր զձեզ :

Երկու հանապարհորդները մտան փոքրիկ սրահ մը, ուր պառաւ կոյր կիւն մը նստե մտնած կը մտնէր : Քօնրադէն ու Ռօզալին զինքը ողջունեցին. եւ նա գոհութիւն ցուցուց անոնցմէ՝ քաղաքավար կերպով, եւ տեղեկացաւ իւր աղջիկէն հիւրերուն զտնուած վիճակը : Կարեկցութիւն ցուցուց Ռօզալիին այնքան սաստիկ հոգնածութեանը վրայ եւ շնորհաւորեց իւր բարեժաման զալուսը :

Այս կիւնը իւր կուրուրեամբը զարմանալի յաջողութեամբ կաշխատէր, եւ ոլորած քեյը խիստ բարակ էր : Ռօզալին ուզեց որ երբայ հանգստանայ : Գլխին (որ այս տղջկան անունն էր) իսկոյն իրեն մամուռէ լաւ անկողին մը պատրաստեց, ուր խեղճ հիւանդը պառկեցաւ :

Եւ ասպէտք խորս մը զնաց ընկողմնեցաւ, եւ այնպէս հանգստութեամբ բնացաւ, որպէս քէ փետրալից անկողինի մը վրայ պառկած էր :

Առաւօտուն արթնցան, երկուին ալ հոգ-

նութիւններնէն սքափած ու առջի օրուրնէ առողջ էին. բարեսիրտ Գլխին պատրաստեց իրենց կազմիկ նախանաշիկ մը, որչափ որ կը ներէր իրեն իւր աղքատիկ վիճակը :

Կերակուրի ատեն ասպէտք Զանկանպուրկի անցեւորուն վրայօք տեղեկութիւն ստացաւ : Գլխին պատմեց իրեն քէ այս ամբողջը դեռ Հարդէնեանին մարդիկը պատրաստ էն. բայց անոնց մեծ մասը դժգոհ ըլլալով իրենց հին տէրոջմէն՝ կը մտաքերէին Զօլէնեանին կողմն անցնիլ :

Ամէն մարդ կը ցանկայ, ըսաւ, Դալէնեան ասպէտքին կենդանութեանը. վասն զի ամէն մէկը զինքը հօր պէս կը սիրէին, բայց կենդադրեն քէ նա ի վաղուց մտնած է : Հարդէնեանին հպատակները իմանալով որ Զօլէնեան ասպէտքը իրենց տէրը բանտարգէր է, ասկէ ետք մըլուն հեռու գեղ մը ժողովուրած են ներկայ պարագաներուն մէջ պատշաճ կերպով գործ տեսնելու համար խորհրդակցելու : Հայրս հոն զնաց :

Քօնրադէն այս լուրը առնելով քիչ մը սրտոտեցաւ : Քանի մը ժամէն վերջը Գլխին տուն եկաւ լուր բերելով քէ՝ Հայրը

վերադարձեր կուգայ : Ծերը եկաւ ներս մտաւ, որ բարձրահասակ մարդ մըն էր, իւր դէմքին վրայ նկարագրուած կը տեսնուէր կասարեալ մարդասիրութեան ու բարեսիրութեան նշաններ :

Իւր աղջիկը վիզը ցասկեց, եւ փարելով նմա համբուրեց զնա . յետոյ ցոյց տուաւ իրեն իւր բացակայութեան ասեմ եկած երկու հիւրերը : Ծերը ձեռքը ասպետին երկնցնելով շնորհաւորեց անոր զալուսը իւր սնակը :

Պատեց իւր կնոջը թէ վերադարձիս ծերունի Յակոբը *յսնկողին մահու գնելով սաստիկ վշտագնեցայ*, եւ շուտով պիտի վերադառնամ անոր հով . վասն զի՝ յայնմ լու կարեւոր գաղտնիք մը ունենալը՝ իմացուց ինձ :

Շատ արտօնօք եկայ, ըսաւ իրենց, ձեզի մեր հաջ Դաւէնեան ասպետին ազատութեան լուրը բերելու համար : Այս ուրախառիթ լուրը բոլոր գաւառին մէջ տարածելու պիտի երբամ, որպէս զի անմիջապէս ջանան երբալ փնտնել զասպետը՝ որ թերեւս հիմա անտառաց մէջ է :

Ամէն մէկը այս լուրին վրայ գոհ ըլլալ երեւցան . վասն զի ասպետը իւր բոլոր հպասակներուն սիրելի եղած էր :

Ասպետն ու իւր կինը խնդում երես իրարու նայեցան, եւ այն ասեմ հասկըցան առաքինի սրտի մը պատրաստած ընդհանուր ուրախութիւնը :

Քօնրադէն ըսաւ ծերին, դու ժողով գեղացիները հոս, ես Դաւէնեան ասպետին վրայօք կրնամ տեղեկութիւններ տալ :

Քանի մը վայրկեանէն բոլոր գեղացիները ասպետին օրեւանին առջեւ ժողովուեցան :

Երբ Քօնրադէն երեւցաւ, քանի մը անձիք՝ որ զինքը կը հանչնային, աղաղակեցին . նա է մեր բարի Դաւէնեան ասպետը . եւ բազմութիւնը կրկնեց. «Կեցցէ Դաւէնեան ասպետը» , ամէնքը նորա չորս դիմ բոլորելով կը փափաքէին իւր ձեռքը տեղմելով զինքը շնորհաւորել, որոյ ներկայութիւնը ընդհանուր ուրախութիւն կը պատճառէր ամենուն :

Երբ մօտակայ գեղը իմացուեցաւ ասպետին ողջ ըլլալը ու Նէօհանսան հասնիլը, մեծ ու պզտիկ վազեցին հոն : Ամէնքը կուզէին զինքը տեսնել, իրեն համար պատերազմիլ, եւ օգնել իրեն իւր ամրոցը կրկին ձեռք բերելու համար :

Դեռ իրիկուն չեղած Քօնրադէն իրեն

համար արիւննին քափելու պատասխան չորս հարիւր հոգւոյ զլուխն անցած, խաղաց գնաց գեղը, ուր առաւօտուն ժողովուրդ էին պատերազմին գործողութեան կերպին վրայ խորհելու համար: Գունդը անցաւ գնաց գեղին մէջ, այս տեղ կը բնակէր ծերունի Յակոբը, եւ կանչել տուաւ Քօնրադէն ըսելով թէ շատ հարկաւոր բան մը ունիմ իրեն հաղորդելու, բայց նա նոյն օրը իւր նպատակին հասնելու հարկադրուած ըլլալով չը կրցաւ ծերոյն փափաքը լեցրնել:

Թէպէտ եւ ժամանակն ուտ էր, բայց եւ այնպէս ուզեցին որ նոյն գիշերը յարձակին Ջանկանպուրկի վրայ: Կէս գիշերին առաջին յարձակումը տուեցաւ, երկրորդին հարկ չմնաց, վասն զի պահապան զօրքերը Հարդէնէական հարսահարութենէն տաղկացած էին. ուստի երկու ժամու չափ իրարու հետ խօսակցելէն յետոյ շարժական կամուրջը իջեցուցին եւ ամրոցը դարձեալ իւր բուն տէրոջը յանձնեցին: Դալէնեան ասպետը առանց կարիքի մը արիւն քափելու մտաւ ամրոցը:

Հետեւեալ օրը իւր հպատակները միա-

բանութեամբ եկան նորէն իրենց հաւասարմութեան տեղումը իրեն մատուցանելու:

Ռօզալին իւր հիւանդութեանը պատճառաւ ծերոյն հիւղը մնացեր էր: Իւր պատկակցին յաղորդութեան լուրը զինքը զօրացուց: Գլխաւոր ուրախակից եղաւ իրեն այս բերկրառիք լուրին վրայ:

Քօնրադէն իւր կինը բերելու համար պատգարակ մը խրկեց ամրոցէն: Երկուքը մէկտեղ իրենց վշտակութեանց վախճանը տեսնելով գոհացան զՍասունձոյ, որ զիրենք յաղթող հանդիսացուց իրենց թեմամեացը վրայ: Եւ արդարեւ իրենց վերանորոգ երջանկութեանը բան մը չէր պակսեր, երէ ոչ միայն իրենց սիրելի Ռօզամոնսը:

Կէս օրէն ետքը զաւտոյն աղջիկներն իրենց պարագլուխ ունենալով Գլխաւոր, միաբանութեամբ եկան ներկայացան ամրոցին առջին, ասպետն ու Ռօզալին շնորհաւորելու համար: Գլխաւոր շնորհալի կերպով մը ողջունեց զանոնք, ու ծաղիկներու փունջ մը մատոյց անոնց. եւ ընկերներուն հետ մէկտեղ ցնծալից ձայնիւ գեղեցիկ երգեր երգեց ի պատիւ այս երկու պատկակիցներուն:

Բօզալին գրկեց իւր սիրելի Գլէրան, որ իրեն այնչափ վեհանձն օգնութիւն մը նուիրեւ էր : Սիրելի զաւակս, ըսաւ իրեն, կուզեմ խնդրել հօրմէդ որ բող սայ զքեզ իմ ֆովս կենալու, ինձի ընկերակից ընելու համար կարօտ եմ դեռահասակ աղջըկան մը. քեզ տեսնելով յիշեցի իմ սիրելի Բօզամօնեսս, որ ֆու տարիք էր, եւ քեզի պէս սիրուն ու բարեբնոյք էր :

Գլէրան հօրը երեսը նայեցաւ, դիտեց թէ ինչ կրօւէ. եւ նա ըսաւ իրեն, սիրելի աղջիկս եթէ կը հանիս, ես չեմ արգիլեր: Աղջիկն անասե՛ն իւր պատշապանին ֆով կեցաւ: Նոյն վայրկեանին ծեր մարդ մը ներս մտաւ, եւ իմաց տուաւ ասպետին թէ ծերունի Յակոբը ամբողջ եկեր եւ անպատճառ կուզէ իրեն հետ խօսիլ. ասպետը հրաման ընելով՝ ծերունի Յակոբն առջին բերուեցաւ:

Պարուն ասպետ, ըսաւ ծերունին մարած ձայնով մը, Աստուած իւր առասպելդ օրհնութիւնը ֆու ընտանեացդ վրայէն անպակասելի ընէ : Ահա մահս կը մօտեայ, եւ արհիս մէջ գաղտնիք մը ունիմ զոր չեմ կրնար հետս գերեզման տանիլ :

Քու Բօզամօնես աղջիկդ բնական մահուամբ մեռած չէ, Հարդէնեան ասպետը ուզելով զանի կորսնցընել՝ զիս ընտրեց իւր անօրէն խորհրդոյն կատարմանը համար : Տղան կողովի մէջ ֆնացուցած ինձի տուաւ, եւ հրաման ըրաւ որ տանիմ զանի յին մը նետեմ : Երբ բաժնուեցայ, վայրենամիտ ասպետը ետեւէս կուգար տեսնելու համար թէ իւր հրամանն անքերի կը կատարեմ : Նս գինգը դիտեցի : Լնին եզերքը հասնելով՝ տղան թուփի մը մէջ զետեղեցի եւ պարապ կողովը նետեցի ջուրը, եւ մէջը ֆարեւ դնելով ընկղմեցի : Ասպետը աղջկան մահուանը վրայ ապահով ըլլալով մեկնեցաւ :

Ո՛հ, աղջիկս հղջ է, աղաղակեց Բօզալի:

Ազնիւ տիկին, ըսաւ ծերունի Յակոբը, խօսքս մի ընդհատե : Երբ տղան ֆնտոնելու գացի, դժուարին մտատանջութեան մէջ ինկայ թէ՛ ինչպէս պիտի կարողանամ պահպանել զինքը. վասն զի անկարելի էր ինձ զանի առանց կասկածանաց տեղի տալու մեծցունել. ուստի տարի Բօզամօնեսը իմ Բիւրուէտ անուն բարեկամիս տունը, որ է Գլէրային հայրը. իրմէ պահեցի դեռա-

բողբոջ աղջկան որն ցեղ ըլլալը, եւ աղաչեցի իրեն որ ծածուկ մեծցունէ զանի. որպէս զի թէ որ դուք բռնութեամբ մեռնէիք, տղան վսանգի մը չհանդիպէր. ուստի եւ գաղտնիքս մէկու մը չվսահացայ. բայց որովհետեւ Աստուած հանեցաւ ձեզ վերստին ձեր ժառանգութեան մէջ բերելու. երջանիկ կը համարիմ զինքս ձեզի իմացնելով թէ Գլէրան ձեր բուն Բօզամոնէս աղջիկն է:

Ամենուն բերնէն զարմացման ցնծալից աղաղակներ փոթան: Գլէրան ու իւր որդեգիր հայրը ապօքեւ մնացեր էին:

Ազնուամեծար Յակոբ, ըսաւ Բօզալին ձերին, չեմ տարակուսիր ինչ խօսեցրուդ նժմարտութեանը վրայ, բայց սա կըսեմ քեզի որ, Բօզամոնէսը աջ թեւին վրայ նժան մը ունէր, պէտք է որ զայն տեսնեմ:

Հոս եկուր, սիրելի Գլէրաս, ցոյց տուր թեւդ. ստոյգ ինքն է, պօռաց Բօզալի, դու ես իմ սիրելի աղջիկս. եկու, եկու գիրկս, եւ փոխարինէ գորովալիւ սիրով իմ արցունքներուս՝ որ ինչ վրայ թափեցի:

Գրկեց ապա եւ իւր աղջիկը ջերմեռանդ փափաքով, եւ բոլոր հոն ներկայ եղողները

զարմանալով այս սրտաւարժ տեսարանին վրայ աղաղակեցին, կեցցէ՛ Բօզամոնէս:

Ընդհանուր ուրախութիւնն այլայլեցաւ Յակոբին մահուամբը՝ որ դեռ երեկոյ չեղած նոյն օրը մեռաւ:

Ասպէս անոր յիշատակը պատուելու համար ամբողջին բակին մէջ հոյակապ շէրիմ մը կանգնել տուաւ:

Չօլէնեան ապա եւ Չանկանպուրկի մէջ եղածները լսելով վախցաւ ապա ետին հպասակներէն՝ որ միաբաներ էին իրենց տէրը պաշտպանելու. եւ ետ կեցաւ իւր աշխարհակալութեան գաղափարն յառաջ տանելէ:

Գալէնեան ապա եւ իւր ժառանգութեան վերադառնալէն յետոյ իր հպասակներուն մէջ անդորրիկ խաղաղութիւն մը վայելեց, եւ շանաց զանոնք երջանիկ ընել:

Հարդէնեան ապա եւ թուառաքար կորեաւ. բանէն ազատել ուզելով՝ բանտապահներէն սպանուեցաւ:

Քօնրաղէնին ու իւր առաքինասէր կողակցին գերեզմաններն ոռոգեցան՝ իրենց երջանիկ ընելու աշխատած մարդիկներուն սրտաբուղիս եւ անկեղծ արցունքներովը:


1511



Մ Ա թ Ի Լ Տ

Պերլինի երեսիլի գաղթականներէն Ֆարնէն անուն անձ մը երկու աղջիկ զաւակ ունէր, որոնց անունն էր Մաթիլս ու Քարոլին. գորոնք կը ջանար կրթել առաւել իւր օրինակովը, քան թէ իւր խօսքերովն Աստուծոյ երկիրդին ու սիրոյն մէջ: Անոնց կրթութեանը վերաբերեալ բան մը զանց չէր ընէր, եւ մեծապէս կը ջանար անոնց ձեռք բերել զայնքան զիստիքս զիստիքս՝ որոնք կրնային զիրենք աշխարհիս մէջ երեսիլի ու փառաւոր ընել:

Մաթիլս յաջողութեամբ կը սովորէր նուագածութեան արհեստն եւ անորոյ կաշխատէր, որով իւր հօրն ըրած ծախքերն ոչինչը չէին երբար: Ամէն առտու կանուխ կելլար, աղօթքը կընէր, եւ կը վազէր նուագարանին ֆով: Վերջապէս հանապազօր-



եայ աշխատասիրութիւնն ու բարեւարութիւնը Մարիլիսին բնաւորութեանը պայծառափայլ ընթացքն էին:

Ասոր հակառակ Քարոլին միշտ անհոգ էր, որ կոսնակապէր իւր յառաջադիմութիւնը: Ամէն օր ուշ կը զարթնուր. երկու ժամ ինքզինքնը զարդարելու կը զբաղէր. եւ դեռ իւր ծնողն ողջունելէն զաս ուրիշ գործ մը չտեսած նաեւ ժամը կը հասներ:

Նախանաեւն ետք Մարիլիս կաշխատէր, իսկ Քարոլին բազմոցին վրայ երկնցած փեղոյրի մը ժապաւէնները կը յարդարէր. գիրք մը կը քոքատէր, կամ շատ անգամ բնաւ գործ մը չէր գործեր:

Հօրը խրատներն ամենեւին շահ մը չէին ընէր, եւ երբ անոր անհոգութիւնը կը յանդիմանէր, կը դժգոհար պատասխան տալով թէ՛ երբ մարդ մը հարուստ ու գեղեցիկ է, նա միշտ բաւական տաղանգներու տէր է: Եւ չեմ ամենեւին ցանկար քոջոս նմանելու որ կարծես թէ իր հացը հարելու կաշխատի: Արուեստագէտ ըլլալը գեղջուկ մարդու օգտակար է, որ չուզեր ալ սակաւապէս կեանք վարել:

Մարիլիս իւր քոջոս այսպէս իրաւաբանելը լսելով՝ ուտերը վեր վեր կը վերցնէր, եւ կը հաստատէր թէ սակաւապետութիւնը մարդս զգաստ ու արթուն կընէ. եւ յիշատակէր որ մարդ արհեստ մը սովորելու կաշխատի, պէտք է որ զգաստ ու արթուն ըլլայ:

Քարոլին կը ծիծաղէր այս խօսքերուն վրայ, արդէն կը տեսնէմ եղբ, կըսէր իրեն, որ գեղեցկազարդ սրահներէն մէջ կը գովաբանիս իբրեւ հազարից ամենէն ընտիր նուագածուներէն մէկը. պիտի դողաս ու սարսափիս վեց հարիւր քննիչներու առջեւ, եւ այսօրն ընդերկար աշխատութիւններուդ մրցանակ պիտի ընդունիս գրեթէ ազատական արուեստներու մէջ քաջանուն մը, ու ծափահարութիւններ: Սյնտան քաշած աշխատութեանդ գեղեցիկ բերկրութիւնը պիտի ըլլայ ուրիշները զքօսցնել եւ գրեթէ անոնցմէ քննուիլ:

Քարոլինին ծաղրաբանութիւններն Մարիլիսը աշխատասիրութենէ ետ չձգեցին, եւ շուտ մը այնչափ յաջողակ եղաւ նուագածութեան մասին, որչափ որ յաջողակ եղաւ գիտութիւններու ու լեզուաց մէջ:

Ամէն սեղ զինքը կը գովէին, եւ փափա-
փանօք կը փնտռուէր, իսկ Քարօլին համա-
բուժ մը չուներ. սեսաւ որ սոսկ զեղեց-
կադիմութիւնն ու զարդարանք միտս այ-
լոց մտադրութիւնը չեն գրգռեր, քէ որ ա-
ռափնութիւններու ու բարեմասնութիւն-
ներու հետ կցորդած չըլլան. ասոր ներհակ
սաղանդներու զօրութիւնը ամէն սեղ կը
հանչցուէր ու կը յարգուէր :

Երբ այս նշմարութիւնը կը սկսէր լու-
սաւորել իւր միտքը, դժբաղդաբար աւելի
յամառեցաւ անոր վրայ չմտածելու :

Քաղաքական անակնկալ դիպումները
մեծամեծ փոփոխութիւններ բերին հասա-
րակաց կալուածներուն սովորութեանը մէջ :
Շատ գաղթական մարդիկ բոլորովին կոր-
ծանեցան, եւ իրենց ծանուցեալ խոհեմու-
թեամբն ու պարկետութեամբը չկրցան
իրենց վիճակը ազատել այս վերահաս
դիպումներէն :

Այս կարգէն էր եւ պարկետ Ֆարնէն՝
որ բոլորովին աննման էր իւր անպատ-
կառ ֆենիչներուն, որոնք որ վաճառակա-
նի մը սնանկութեամբը կը հարստանան,

ուզեց որ իրեն կալուածներ վստահացու-
ցներուն անքերի վնասումն ըլլայ, եւ ա-
նոնցմէ ոչ մէկն ամենափոքր վնաս մը չըրկէ :
Ծախեց իւր բոլոր ստացուածքը, ազնիւ
կան կարասիները, ու իւր նոյն գրանցը՝
որ Մաքիլսին զուարեութիւնն էր : Իւր ա-
ռափնի պատկակիցը տուաւ իւր գոհարե-
ղէնները, զարդերը, նմանապէս իւր աղ-
ջիկներունը, նաեւ Մաքիլսին նուագարա-
նը. այսպէս ինչ որ ունէին ամէնքն ալ
վաճառեցին եւ ստակ մըն ալ չմնալով՝
իրենց փոխասուններուն վնասեցին պարս-
ֆերնին :

Ֆարնէն չկրնալով ալ քաղաքական ըն-
կերութեան մէջ ունեցած կարգը պահել,
ֆառուեցաւ Մէրլաննէն գեղը :

Քարօլինը կտաւագործ կնկան մը ֆով
աւակերտութեան տուաւ՝ որ այս գոռոզ
աղջկանը շատ նեղացուցիչ եղաւ : Մաքիլս
մտաւ նուագագործի մը ֆով՝ որ արդէն շատ
ասե՛ն իրեն վարպետութիւն ըրած էր : Անոր
գործարանը կը կենար, եւ դասասուութիւն
կընէր իւր աւակերտութիւններուն : Երբալով
համբաւը սարածեցաւ, եւ քիչ ժամանակի

մէջ կարող եղաւ չէ՛ր քէ միմակ իւր ապ-
րուսը նարելու, հապա նաեւ մեծապէս
ձեռնու եղաւ իւր սիրելի ծնողացը ամէն
կարօտքիւններուն :

Փարնէն սիկին՝ որ երկար ատեն իւր մե-
ծապայծառ սրահը պատուաւոր ընծայա-
ցուցած էր, խոշոր հանդերձներ հագած
ինքնին կը կատարէր իւր խոհարարութիւնը,
փսիաքէ փեղոյր մը զլուխը դրած իւրովի
վանառանոց կերբար իւրէն պէտք ըլլալիք
բաները գնելու :

Իւր այրը դեռ տարիք առած չըլլալով
ուժով էր. փայտ կը սղոցէր. փոքրիկ պար-
տէզ մը կը մեակէր, եւ անհնարին դժուա-
րութեամբ իր անձը պահելու ապրուստ
մը կը նարէր :

Այս պատուելի մարդը որ երբեմն երե-
ւելի ընկերութիւններէ հրաւիրուած էր,
եւ ինքը մայրաքաղաքին տղանդաւոր
մարդիկներէն շատերը իւր սեղանն ընդու-
նած էր, առանց սրճաչալու ստժանելի աշ-
խատութիւններ կը կատարէր : Երբ ձախողակ
մտածութիւններով նակիսին վրայ սրճմու-
քեան կննիւ մը երեւար, նոյն սրճմութեան

մէջ յԱսուած ապաւինելով զինքը կը հան-
դարեցնէր. վասն զի բարեգործ մարդն իւր
բոլոր վստահութիւնն Ասուծոյ վրայ կը դնէ :

Տարի մը այսպէս անցաւ : Քարօլին այս
նոր վիճակին պարտաւորութիւնները սրճըն-
ջալով կը կատարէր, եւ հազիւ իւր կարօ-
տքիւնները լեցրնելու չափ բան մը ձեռք
կը բերէր : Անարժան կը բուր իրեն ծար-
ներ ծալել, եւ նստիլ մի եւ նոյն նստարանին
վրայ, ուր որ կը նստէին գործաւոր աղ-
ջիկները, որոնց երբեմն այնչափ ար-
համարհանքով հրամայած էր կտաւագործ
կինը. մանաւանդ իրեն շատ պզտիկութիւն
կը համարէր, երբ կը տեսնէր իւր հօրը տու-
նը եկող անձանց հոն գալը, որոնք զինքը
կտաւագործ ըլլալու վիճակի հասած կը
տեսնէին : Երեսին վրայ երեւցած յան-
կարծ կարմրութիւնը իւր արտին խռովու-
թիւնը ցոյց կուտար. աւելի լաւ կը հա-
մարէր մեռնիլ, քան քէ նանչցուիլ : Իւր
արտնդութիւնն աւելի եւս կառելաւ իւր
համբակութենէն, եւ շատ անգամ իւր
վարպետիկէն յանդիմանութիւն կը լսէր :

Մտախիտ, ընդհակառակն՝ զինքը, փոյրն

ու ընճանիքը այս անակնկալ ձախոր-
դութեանն ազատելու փափաքանոց սք-
սոսած, ուրախութեամբ ու մեծազան
փութով կաշխատէր, ու կը կատարէր
ինչ որ իրեն կը հրամայուէր. եւ գո-
հութեամբ սրտի կը ցանկէր իւր նոր վիճակը՝
որ շուտով հասոյց գինը ընճանեկան վի-
ճակի. գործարանին բոլոր գործաւորնե-
րուն գլուխ կարգուած էր, ծաղկահասակ
աղջկանց նուագածութեան դասասուու-
թիւն կընէր, ու ինքն իւր արհեստին մէջ
կը կատարելագործուէր. այսպէս երթալով
իւր յարգի վարպետը զինքն եւս առաւել
կը սիրէր. եւ վերջապէս շուտով ընդունեց
իւր առաքինութեան ու աշխատասիրու-
թեան մրցանակը :

Մէրլանհէնի նոր բնակիչք, այսինքն՝
աղջկանց ճնողք, երկար կարօտութիւն քա-
ւեցիին իրենց օգնող որդուքը համար, իսկ
այս առանձնութիւնն աւելի քաղցր կը
թուէր իրենց քան հոյակապ պալատի վա-
յելչութիւնը :

Քարօլին իւր քոջն օրինակէն յորդո-
ւելով սկսաւ մտադիւր աշխատիլ, եւ յա-

ջողակութիւն ունենալով շուտով գերա-
զանցեց իւր փոքրիկ ձեռագործներուն մէջ՝
որ կանանց համար հանոյական նկար
են. կարն խօսով ըսեմք. բոլոր ընճանիքը
բաղդին անհաստատութիւնը կրցան բանի
տեղ չդնել, եւ սակաւապետութեան ու աշ-
խատութեան մէջ ամենաքաղցր խաղաղու-
թիւն մը վայելել : Բայց աւանդ, ասի եր-
կար չեցեց : Ֆարնէն սիկին չէր կրցեր
առանց ցաւոց այնպիսի փառաւոր վի-
ճակէ մը յետին չհաւորութեան մէջ իյնալ :
Ի զուր կը ջանար իւր սրտին անձկու-
թիւնն իւր պսակակցէն պահելու, եւ յան-
կողին հիւանդութեան իյնալով իւր ջան-
քերը վերջաւորեցան : Մաքիլս իւր մօրը
հիւանդութիւնը լսելով ձգեց Պէրլին ու
քոջունի պէս քուս եկաւ անոր հովը գա-
նի խնամելու . Քարօլին եւս իւր քոջն
այս սրբազան պարտաւորութիւնը կատար-
ելու մասին ուզեց գործակից ըլլալ :

Երկու քոջ սրտի մօտ ըրած փութազան
խնամները քող չտուին հիւանդութեան
յառաջդիմութիւններ ընելու : Մաքիլս
Պէրլինէն հարսար բժիշկ մը բերել տուած

էր, իւր արուեստին բոլոր օգնութիւններն իւր մօրն անխնայ մասակարարելու համար:

Փարնէն տիկնոջ հիւանդութիւնն երկարատեւ հիւժական ակտ մը ըլլալով՝ Պ. Պէրկման, որ բժիշկին անունն էր, անոր բժշկութեւն վրայ ինչ յոյս ունէր, բայց եւ այնպէս իւր հիւանդութիւնն անզգալի ընելու համար խրատեց իւր աղջիկն որ փոյի սենեակը փնտրեգութիւններ ընէ:

Մաքիլս սկսաւ փողոց ձայնով երգել, եւ նշանաւոր նաւարութեամբ հնչեցնել Գերմանացի նուագածուներուն զեղեցիկ եղանակները: Մայրիկը չձանձրացնելու համար երբեմն ամենափողոց խորալի երգեր կը հնչեցնէր, երբեմն ուրախական նուագներ՝ որոնք խեղճ հիւանդին նակսին վրայ երբեմն կենաց նառազայք մը կը ցոլացնէին:

Մէղք, կըսէր Փարնէն տիկինը, որ չը գոհացայ Աստուծակ ինձ ասանկ հաննարեղ աղջիկ մը պարգևելուն համար. որ այնչափ տարիներով սուլած ուսումնակներուն նախընծայ պտուղը կը նուիրէ իւր հիւանդագին մօրն օգնութեանը:

Քարոլին իւր փոշը տուած գովութիւնները լսելով կը հառաչէր. թէպէտ եւ չարասիրտ չէր, բայց նախանձէն կը հալէր ու կը մաշէր:

Կերբար կառանձնանար ու կը սկսէր լալ. հայրը վրայ հասնելով կը հարցընէր լալուն պատճառը, բայց նա կը ջանար ծածկել անկէ իւր սրտանկիկ ցարը:

Ինչո՞ւ համար, կըսէր ինքնիրեն, մօրս վրայ ունեցած այնչափ խնամքներս պաղ կերպով մը կը նկատուիմ, միքէ Մաքիլսին չափ սէր չունիմ իւր վրայ, իմ սիրոյս փորձերը օրը հազար անգամ ցոյց չեմ տար: Բայց չէ, ես անոր պէս հաճոյական տաղանդներ չեմ տեսած, ու իմ բոլոր անձնանուէր սպասարկութիւններս բանի մը տեղ տեղ անցնիր. քանի որ ես երեսի վրայ մնացած եմ, ամէնքը կը վազեն Մաքիլսին փով, եւ կը ջանան հաճոյանալ անոր:

Բարի Մաքիլսը միտք դնելով անոր վրայ երեւցած տեսնութեան զգածումներուն՝ չտարակուսեցաւ որ անոր պատճառը նախանձն եղած ըլլայ, կարծեց թէ իրենց

մօրը հիւանդութենէն յառաջ եկած էր: Այս-
պէս ազնիւ աղջիկն ամէն կարելի միջոց-
ները ձեռք առաւ զանի մխիթարելու
համար:

Օր մը՝ մինչդեռ մայրերնին կը քնանար,
Մարիլս պարտէզ իջաւ, եւ սարփինայի
մը տակ գտաւ իւր Քարօլին փոյրը, երեսին
գայնը նետած եւ աչկերը կարմրած, որով
յայտնի եղաւ լացած ըլլալը:

Հարցուց իրեն Մարիլս. ինչ կայ իմ
սիրելի փոյրս, վշտացած կերելիս:

Բան չկայ, ինչ պիտի ըլլայ. մեր մէջը
կը գտնամ տեսնելու պատճառը:

Բայց ես քեզ սաստիկ վհասութեան մէջ
տեսայ, ըսաւ Մարիլս. մեր մօրը հիւան-
դութիւնն անտարակոյս շատ վնասգաւոր
է. բայց Պ. Պէրկլման զինքը մեռնելու վի-
ճակի չդրաւ. դեռ յոյս բողոց մեզ անոր
ազատութեանը վրայ:

Ո՛հ, ո՛ր էր, Աստուած տայ, ան շատ
բարի է, մեր երկուքն ալ շատ կը սիրէ:
Բայց քեզ առաւել եւս կը սիրէ, քեզ. դու
այս տանը մէջ նախապատիւ համարուած
ես, ու ես ոչինչ, ինչպէս որ գիտես:

Կը խաբուիս, իմ սիրելի Քարօլինս,
երբէք. ինչպէս որ կը հաւատամ, մեր
ծնողքը քեզի ցաւելու պատճառ մը տուած
չեն:

Ճճմարիտ է որ առանց անհրաւորեան
չեմ կրնար ամբաստանել զիրենք, քէ ծայ-
րայեղ կողմնասիրութիւն ունեցած են.
բայց երբէք զիս իրենց գորովալիւ սիրովը
սիրած չեն:

Իրաւունք չունիս, փոյրս, չգիտեմ քէ
ասանկ վիճակի մը մէջ ինչ բան կրնայ
քեզ դժգոհացընել մեր ծնողացը դէմ՝ որ
կը սիրեն զքեզ:

Ես իմ ստորին աստիճանս կը ճանչնամ,
կրկնեց Քարօլին պաղ կերպով մը. քեզի
պէս ճարտարութեամբ մտախ ծայրովը
նուագարան հնչեցնել չեմ գիտեր, եւ այդ-
պէս գեղեցիկ եղանակաւ երգել. ասոր
համար համարում չունիմ. իմ խնամքներս
աղախի՛նի մը սպասաւորութեանը չափ
յարգ չունին:

Բարեսիրտ Մարիլս, անպատեհ հասկըցաւ
որ իւր կարծածէն զատ՝ ուրիշ պատճառ
ունի եղեր անոր սրտին տեսնութիւնը, եւ

իւր դիւրագգաց սիրն աւելի եւս վշտա-
ցաւ անոր վրայ :

Կերպ կերպ մխիթարութիւններ մասոյց
Քարօլինին . բայց այս բռուտ աղջկան
սիրք քարանալով՝ սմարդի խստութեամբ
մը մէկդի հրեց զանի :

Այս վայրկեանէն յետոյ մեծ պաղուրիւն
մը տիրեց երկու քոռ մէջ : Մաքիլս ամէն
օր անոր սիրքը իւր վրայ քաղցրացնելու կը
ջանար , բայց Քարօլին անոր ամէն ջան-
քերուն առջին անգգայ կը մնար :

Օր մը՝ երբ բոլոր ընտանիքն ու բժիշ-
կը մէկտեղ ժողովուր էին , հիւանդը՝ որուն
առողջութիւնն օր օրի կը պակսէր , խընդ-
րեց իւր աղջիկէն որ իրեն գեղեցիկ սաղ մը
երգէ՝ որն որ լսելով շատ ուրախութիւն
կը գգար :

Մաքիլս զնաց բերաւ իւր նուագարանը ,
եւ սկսաւ հետեւեալ ժողովմաս սաղը երգել :

Դու նանաչես այն սուրբ երկիր,
Ուր ցաւագին ձայն չըլլաւիր,
Եւ ոչ բընաւ արատուներ
Անդ կը հոսեն մերքս աչներ :

Ճանաչես զայն վայր բերհարար,
Ուր կը վայլէ մարդ բարեար
Ըզգործս զոր աս նա արար՝
Կեանքս անմահ երջակարար :

Ճանաչես այն ազնիւ հանքան՝
Որ լուսեղէն ամէ կայան՝
Ուր որ գործով արդարանան,
Եւ հաւատով պայծառանան :

Մարդ մեղսատէր որ խոսորի՝
Յայս երջանիկ հանապարհէն,
Ի յանվախեան սարսարոսի
Հալի մաշի անեղ բոցէն :

Բայց քէ սիրքն ի վեր ուղղէ,
Ի բաց հերէէ սին պատրաններ,
Եւ մոլութեանց չը զակաշէ,
Կը ժառանգէ անմահ փառներ :

Անհաստատ դու ուխտագրեաց
Ջանա երբալ անխոսորած՝
Մտիւ հոգւով հանդարտացած՝
Յերկնից գաւառ խաղաղակեաց :

Որ խոսորած երկնից նանբէն՝
 Կերբայ օսար առապարէն,
 Յասըմնալից Դասաւոր մը՝
 Իւր դէմը կեղանէ անդէն :

Նա բանական՝ է մարդ միճակ՝
 Երկնից ուղին է հետեւակ .
 Իսկ չարքն անդ կը կըրքոտի ,
 Միտք ցընորած կերերոտի :

Ես քեզ կերգեմ, ո՛վ մարդ գոյակ՝
 Կը նանաչես դու այն միակ՝
 Մարդ Բարեկամն Ասուած էակ՝
 Քու՛մ փրկութեան եղաւ խնդրակ :

Ի սէր քոյին ի խաչ ելաւ ,
 Զինու ի սէգ սուր խոցեցաւ ,
 Ասուած մարմնով շարչաբեցաւ ,
 Արիւն լուայ կարմիր ներկաւ :

Դու հաւաստւ, ո՛ սիրելի,
 Իւր սէրն ունի միտք անյեղի .
 Մի՛ դու ըլլար ի՞ծ ունկնախից ,
 Լըսէ՛ Անոր կենաց բանի :

Դու քէ բանաս ականջիդ դուռ՝
 Ասուածեղէն ձայնին ի լուր .
 Կերկընցընէ անուուս քեզի
 Ըզձեռըն իւր պարգեւասուր :

Կը պաշտպանէ ազատութեամբ
 Ամենակալն իւր զօրութեամբ ,
 Զի նա չարին է եւ բարւոյն
 Միտք բարեբար սիրոյ սարփմամբ :

Ջանացիր երբալ անն նանբան՝
 Յորոյ կէտին երզանկական՝
 Կայ կառուցեալ քոյ օրեւան՝
 Որ արդարոյ է բնակարան :

Երգոյս նուազ ըզմքսաւ ան ,
 Սիրքդ ուղղէ դէպ ի յԱսուած ,
 Թէ՛ դու արդար կամ մեղաւոր՝
 Վասան եղիր յԱյն յուսացած :

Այս երգը լսելով Ֆարնէն սիկին ի խոր
 արտէ հառաչելով բսաւ. այն, շուտով պի-
 տի նանչնամ ես այն երկնից գեղեցիկ գա-
 ւառը :

Շնորհակալ եմ քեզմէ իմ Մարիլսա. Բու փութաջան խնամովոյ էր որ մինչեւ հիմա վրաս քիչ մը ուժ մնաց, դու պատշապանեցիր զայն: Եւ ելաւ շեմ սիրով մը գրկելով զանի բաւ. շնորհակալ եմ շնորհակալ, իմ սիրասնունդ աղջիկս. դու ես մեր պահապան հրեշտակը :

Այս արտառուչ սեսարանին վրայ Պ. Պէրկմանին սիրսն ելնելով՝ սիրով Մարիլսին ձեռքը սեղմեց:

Չասոնք սեսնելով Քարօլին այլալեցաւ, եւ իսկոյն ետ քաշուելով իւր արտին ննուտ մը հովանքելու համար պարտէզ գնաց: Եղնալին ինքզինքը սփոփելու համար առանձնանալու պէտք ունէր. քանզի իւր մտքին ներհակ արտի ննուտ մը կը զգար:

Մարիլսին ու Քարօլինին փութաջան խնամասարութիւնները, Պ. Պէրկմանին հարսարութիւնն, ու այս առաքիլի ընտանեաց առ Աստուած ուղղած արեւանդն աղաչանքները Ֆարենէն սիկնոջ առողջութիւնը չկրցին վերանորոգել: Կը սեսնէր որ Մարիլսին երաժշտութեան ու ձայնին պատշառամբ բոլոր զուարճութիւններուն հակա-

ռակ իւր վրայ մնացած փոքր ինչ զօրութիւնն օր քան զօր կը պակսի, սխալուեցաւ Մարիլս դադրեցընել այս միջոցը, վասն զի զօրեղ ազդումն մը կը ներգործէր խորհալի մօրը վրայ: Այս վայրկեանէն յետոյ սրտաբախն առ հասարակ ամենուն վրայ սիրած էր. եւ Քարօլին բոլորովին վհասած հօրն ու քոջն անհանգստութիւն կուտար:

Մարիլս չէր համարձակէր Քարօլինի ցաւոյն պատճառն իւր հօրն իմացնել. վախճալով որ չըլլայ քէ անոր անհանգստութիւն մը պատճառէ:

Չախորդ դէպք մը վրայ հասնելով՝ վերջին հարուածը տուաւ Քարօլինին: Ֆարենէն սիկին սեսնելով որ իւր վախճանը կը մօտենայ, չուզեց Մարիլսէն զատուրի մէկէ մը սպաս ընդունիլ: Երբ Քարօլին իրեն օտարակ մը կը մատուցանէր, կը վռնէր զինքը, եւ նշանացի ցոյց կուտար քէ, կուզէ որ միայն Մարիլս մատուցանէ իրեն զայն:

Այս գործը արօրինակ բան մը չէր հիւանդաց յատուկ արհնդութեանը նայելով, որով շատ անգամ իրենց ամենէն սիրելիները կը վռնեն. եւ իւր մօրը տկարու-

քեանը մէջ անոր խտրութիւնը միայն կը
սեսնէր ու կը նախանձէր :

Քրոջն օգնական ըլլալու համար գիշերը
մօտը քով անցունելէն յետոյ՝ երբ հիւանդը
կը քնանար, զայն պատեհ առիթ համարելով
կերբար կառանձնանար իւր սենեակը, որ
այն տեղ միայնիկ մնջիկ իւր ցաւոցը քե-
լադրած բոլոր ցնորանքներուն տեղի տայ :

Վերջապէս ձանձրանալով ասանկ արտի
տագնապ ու նեղութիւն կրելէն՝ ուզեց աղօ-
թից օգնութեանը դիմել, բայց ժամանակն
անցեր էր: Աղօթած ասեցը կը յուսահատէր,
գիրքը ձեռքէն կիցնար, եւ հոգին անդադար
սրտմութեան առարկային կը դիմէր :

Փարեհէն տիկին ամբողջ ամիս մը մահ-
ուան տագնապը քաշելէն յետոյ՝ տեսաւ իւր
վերջին ժամուն մօտեցալը . ուրախութեամբ
ողջունեց զայն . վասնզի իւր բոլոր վշտ-
կութեանց վախճանն էր այն :

Գիշեր ասե՛ն նուազ ձայնով մը Մարիլս
կանչեց, որ ասե՛ն Մարիլս հոգնութե-
նէն բույցած ինկեր կը քնանար անկողնոյն
վրայ :

Սիրելի Մարիլս, ըսաւ իրեն, անա

վերջին ժամուս հասնիլը կիմանամ, կու-
զեմ քեզ վերջին անգամ մըն ալ տեսնել :

Մարիլս գնաց փնտնելու տոյրն ու հայրը .
որոնք երբ հիւանդին անկողնոյն քով
եկան, հիւանդը դողդեջելով ելաւ նստաւ
ու ըսաւ իրենց :

Իմ սիրելի բարեկամներս, ես անա կը
քողում այս կեանքը . մահը ինձի համար
փափաքելի է . վասն զի բշուառութեանցս
վախճանն է, եւ անոր գալը ուրա-
խութեամբ պիտի տեսնելի՝ քէ որ առ-
խարհիս վրայ ինձ ամենասիրելի անձեր
չքողէի: Բայց պէտք է խոստովանիմ քէ
իմ մահուանս պատճառն ես ինքս եմ .
վասն զի միշտ մտածելով իմ զգնուած փա-
ռաւոր վիճակէս բշուառագին վիճակի
մէջ իյնալս, եւ ձեզի՝ իմ աղջիկներս,
կը մտաբերէի հարուստ ժառանգութիւններ
քողուլ, տեսնելով որ ամուրի վիճակի մէջ
բշուառ կեանք անցընելու ստիպուած
էի, ուր որ գրեթէ պարտաւորած եւս էի
ամուսնանալու այնպիսի մարդոց հետ՝
որոնք ձեզ երջանիկ պիտի չկրնան ընել,
այս ամէնը մտածելով չկրցայ դիմանալ

Եւ ասնել այս ծանրաբախիծ խորհուրդը .

Մաքիլիս իւր քոջը չափ ինձ անհանգրստութիւն չպատահաւոր . ստացած անդանդները կօզտեն իրեն աշխարհիս մէջ պատուաւոր վիճակ մը ձեռք բերելու : Ամէն տեղ պիտի փնտռեն զինքը ընտրողութիւն ունեցող մարդիկ . իւր հանապազօրեայ աշխատաստիւթեամբը սովորած ուսմունքները եւ զինքը զարդարող գովելի յատկութիւնները նախամեծար պիտի դասուին բարեխորհուրդ անձէ մը՝ որ անոր հետ պատկուելը իրեն երջանկութիւն պիտի համարի :

Բայց մեծ ցաւս Քարօլինին համար է , եւ կը զոջամ այս վայրկեանիս զինքն աւելի բախանձանքով չորդորելուս համար որ իւր քոջն օրինակին հետեւէր : Կը ցաւիմ իւր ունայնաստիւթեանը վրայ . գրէքէ ես սիրտ տուի իրեն զարդաստիւթեան : Ինքը գեղեցիկ է , կը մտածէի թէ իւր գեղեցկութիւնն ու հարստութիւնը կարող են տալանդներուն տեղը բռնել , զորոնք իւր տոյրը անդադար կը ջանար ձեռք բերել : Այսօր կիմանամ իմ յանցանքս բոլոր

արտօն . բայց չարիքն անդամանելի է , եւ այս՝ այս խեղճ Քարօլինը՝ պիտի պարտաւորի նուաս ու ցածուն կեանք մը անցընել : Իրեն կը հրամայեմ որ զինքն Ստուծոյ կամացն յանձնէ . գիտնայ գոն ըլլալ՝ ինչ վիճակ որ Ստուած իրեն կը պարգեւէ . եւ թէ որ մարդիկ զինքը բողուն՝ երբայ Ստուծոյ գորովալիր գիրկն իյնայ : Եւ դու , իմ հին բարեկամս , ըսաւ իւր էրկանը ձեռքը բռնելով , ներէ իմ սկարտեանս , որուն առաջին զոհը կը տեսնես այսօր : Ահա իմ վերջին տարիներուս վիշտերը լրացուցի , զորոնք այս առանձնութեան մէջ անցուցիւնք : Իմ տրտմութիւնս մեղմելու համար մեր բրած ջանքերն ոչինչ էին , եւ դու իմ արտիս մէջ կարդացիր այս վշտերուն պատճառը : Ներեցէ՛ք իծի , սիրելիներս , ձեր բոլոր արցունքներուն համար , որ ձեզի բափել կուտամ :

Եկէ՛ք բարեկամներս , եկէ՛ք , վերջին անգամ մ'ալ ձեր բարեկամը համբուրեցէ՛ք , զոր Տէրը քանի մը վայրկեանէն իւր գիրկը պիտի ընդունի :

Ֆարնէն տիկին իւր տրտմութիւնները պատ-

կակցին օրբուններուն կացուց, եւ չկարողացաւ անոր վերջին մնաք բարովն բսել: Այս պատուելի ծերոյն սիրն ելած ըլլալով չիրցաւ խօսք մը գրուցել, մինակ իւր հեծկլսանքը արտին բարգման կըլլային:

Մարիլս ու Քարօլին կարգաւ իրենց մայրը համբուրեցին:

Ֆարնէն սիկին նշան քաւ Մարիլսին որ իւր քովը գայ: Իմ սիրելի զաւակս, քսաւ իրեն, առ քու նուագարանդ, եւ լսել տուր ինձ քաղցր ձայնիկդ. վերջին անգամ մ'ալ ինձի հոգեւոր տաղ մը երգէ՛ որ երկնից նանքան պիտի բանայ իմ հոգւոյս:

Մարիլի սիրն ելած էր, սակայն վերջին կամացը հնազանդով՝ գնաց նուագարանը բերաւ, եւ նստաւ մօրն անկողնոյն վրայ, ու հետեւեալ տաղն երգեց:

Երբ ցաւ անգուր իմ առնրներ՝
Գայ իւր ժանեօքն մահաբեր,
Վառեալ գինու Սրբոյ Հոգւոյն՝
Համբերեմ քեւ Ա՛ստուած իմ Տէր:

Երբ կը գնամ ես զիս սրկար,
Եւ հաւատով յոյժ ապիկար,
Հոգւոյս վարեմ ըզդասասան,
Դասապարտեմ զիս կամակար:

Վիշտն է առնող մեզի մահուր՝
Որ կը արէ հոգւոյ մըրուր.
Նըմանագոյն անբիծ մանկան,
Տայ մեզ լինել քո յանդիման:

Իսկ եւ մեր մարմին մեղսասէր՝
Անցատէ ի քէն զոգիս մեր.
Թող ի հող լուծցի այս աման
Զի ընդ քեզ լինիմք միաբան:

Որում գիտն ցաւոց տկալ
Եիս բարի է քան մեծ խնդալ.
Որ տրտնջալ սրկարութեամբ,
Զուրախանար անդ հանգստեամբ:

Անմահ էակրն Միածին
Մեզի համար խաչ առ անձին,
Անարգեցաւ անբաւելին.
Զի երկնչիմք մեք ի վշտին:

Որով մտանեմք ժառանգութեան՝
 Հօր անեղիղ որդեգրութեան .
 Եւ երկնային անանց բարեաց՝
 Կը ժամանեմք հոգւով խայսած :

Երանութեան այն մեծ պըսակ՝
 Յաւիտեանից կենաց պարձանք ,
 Որուն բաղձանք մեկ միաբան,
 Զայն չեմք զտեսնել անկապ :

Հապա մինակ մեծ անցներով ,
 Եւ նեղութեանց հուրք փորձելով՝
 Փայլեալ իբրեւ զոսկի մառուր՝
 Փառազարդիմք երկնից լուսով :

Այս սգալի երգը բոլոր այն տեղ ներկայ եղողներն ընկղմեց ի խոր տրտմութեան, եւ երգէն ետք վսեմ լուսիւն մը տիրեց : Այն աստիճան Մարիլս մօտեցաւ մօրք, եւ տեսնելով որ հոգին աւանդեր է, սոսկալի աղաղակ մը փրցուց :

Պ. Պէրկման ընտանեաց ճիչն ու աղաղակը լսելով վազեց եկաւ, եւ ուրիշ բան մը

չկրցաւ ընել, հապա մինակ սկսաւ անոնց հետ այս ազնիւ տիկնոջ մահը լալ :

Պ. Պարնէն մարեր ինկեր էր. որ թէպէտ քանի մը օր առաջ հասկըցած էր իւր ընկերոջ մահուան վիճակի մէջ ըլլալը. բայց այս վայրկեանը իրեն շատ սոսկալի ու ողբալի եկաւ : Եւ ինչ Մարիլս կուլար կողբար, բայց հանդարտութեամբ ու երկնաւոր մխիթարութեամբ. վասն զի անտի կենաց լաւագոյն յոյսն ունէր : Իւր ցաւոյն մէջ երջանիկ էր. մտածելով որ իւր սիրելի մայրը կերթայ յերկինս իւր առաքինութեանց մրցանակն ընդունելու :

Քարօլին բոլորովին վնասած իւր մօրք խօսքերը դեռ կը հնչէին իւր առանցքը, իրեն կուգար թէ սպառնալից մարգարէութիւն մը կը լսէր : Իսկոյն խեղճ աղջկան վրայ տոյնիչ ջերմ մը տիրեց, բայց Պ. Պէրկմանին դարմաններովը շուտով բժշկուեցաւ :

Իւր բարի տոյրը՝ որ թէպէտ մօրն այնքան երկարաձիգ հիւանդութեան աստիճան կրած աշխատութիւններովը բոլորովին սկարացեր էր, չուզեց բողոյ իւր տոյրն առանձին եւ անդադար խնամեց զանի : Քարօլինին վրայ

ցնորանք մը եկաւ . եւ այս վիճակին մէջ կը յանդիմանէր իւր հայրը , զինքը չսիրելուն ու ամէն նախապատուութեան նշաններն իւր քրոջը ցոյց տալուն համար . գանգատեցաւ մօրմէն , ըսելով թէ Մաթիլթին իրմէն գերազանց կրթութիւն տալու հոգ տարաւ , որպէս զի իւր սիրելի նախապատուութեան զաւակը փառաւոր հանդիսացրնէ , եւ զինքը միշտ ցածուն վիճակի մէջ բողոքու : Նաեւ իւր քոյրը , իւր բարեսէր քոյրը եւս անտես չեղաւ : Այս ցնորեալ ժամանակին մէջ յայտնի ըրաւ թէ ինչ աստիճան կը նախանձէր իւր քրոջը վրայ : Այն ասեմ միայն հանչեցուեցաւ Քարօլինին սրտաւրեան թխուր գաղտնիքը :

Այս ցնորման ետեւէն վրան տարօրինակ վիտարութիւն մը եկաւ , որով չկրցաւ իւր բարի մօրը յուղարկաւորութեան հանդէսին ներկայ գտնուիլ :

Մաթիլթ' որ դեռ չէր բողոքեր իւր քոյրը , մեղմ վիճակի մէջ տեսնելով՝ զանի աղախինքի մը խնամատարութեանը յանձնեց , եւ ինքը փութացաւ իւր մօրը յուղարկաւորութեան պատրաստութիւնները տեսնելու :

Ննջեցելոյն տանը դրան առջին Մերլաննէնի հովտին բնակիչներուն մեծ մասը ժողովուած էին . վասն զի Փարնէն տիկին առ հասարակ ամենուն սիրելի եղած էր : Չկար գեղացի աղէտներէն մէկը՝ որ անկէ օգնութիւն գտած , կամ օգտակար խրատ մը առած չըլլար :

Եկաւ տեսուչ քահանայն , եւ հոն ներկայ գտնուող բոլոր բազմութիւնը քահանային հետ յուղարկաւորութեան գացին : Երբ հասան հոն՝ ուր որ գերեզմանը պատրաստուած էր , սկսան արցունք քափել : Ամէն մէկուն կը բուէր թէ մտնջեմաւորապէս բարեկամէ մը , մայրէ մը կը գտնուէին : Քահանայն անոնց ցաւը մեղմելու մասին դժուարութիւն կրեց :

Մարմինը իջաւ գերեզման եւ քահանայն ափ մը հող նետեց մէջը , եւ նետեալ խօսքերն արտասանեց՝ որ խորին սպաւորութիւն մը ըրին ունկնդրաց վրայ :

« Իմ յոյս , հողը թեքել բողոք գայ քեզի . վասն զի դու շատ բաներ քաւեցիր աշխարհիս մէջ , եւ քու առաքինութիւնդ անոնցմով երբէք չստատանցաւ : Տեսար

դու քու բոլոր եղջանկութեան յոյսերուդ անհետանալը . քու բարեբաղդ վիճակդ կորուսիր . եւ ինչպէս որ տեսները հովէն բոթափելով կը ցուին , այնպէս քու ինչֆերդ ցիր ու ցան եղան . բայց դու քու վստահութիւնդ Աստուծոյ վրայէն չվերցուցիր : Նրանի քեզի որ քու հաւատոյդ երբէք նուազութիւն չբերիր , թէպէտ եւ խիստ փորձանքներու տակ ինկար : Չտարակուսեցար , եւ պիտի վարձասրիս . վասն զի Աստուած էր ան չարիքները քեզի զրկողը՝ քու հաւատեղ փորձելու համար , որպէս զի զքեզ երկնից մէջ արժանացնելով քու համբերութիւնդ վարասրէ :

«Արդ , եղբայրներ , նմանինք մեր այս քնոջ , յորմէ այսօր մահը զքեզ կը զատէ . զքեզ աշխարհիս ինչքերուն հետ սաստիկ սիրով չկապենք . վասն զի կամայ ակամայ պիտի հարկադրինք որ մը զանոնք բողուլ : Հապա ջանանք մեք զքեզ ջերմեռանդ սիրով Աստուծոյ հետ կապել , վասն զի Նա է միայն անկորուստ ինչք : Հարսութիւնը շատ անգամ արգել կըլլայ մեր արտերն առ Աստուած բարձրացնելու .

սնտախառութեամբ ինքզինքնիս կը փառաւորեմք . հպարտութեամբ մեր կարողութիւնները զօրութիւն կը կարծենք , եւ անոնց վրայ կը մեծամտինք . եւ երբ անակնկալ բռնառութիւն մը գայ վրանիս , կը լճանիմք , բաւական զօրութիւն չենք ունենար զանոնք համբերութեամբ կրելու : Սովբեցրենք մեք զքեզ , եղբայրներ , ժուժկալութեան եւ սակաւապետութեան . երկինքն է իմաստուն մարդուն համարիս վայելք . հոն կը բնակի եղջանկութիւնը : Աստուած ըլլայ մեր միակ ինչքը երկրիս վրայ . վասն զի մեր բուն հայրենիքն երկինքն է , եւ երկրիս վրայ մեր կեանքն ուրիշ բան չէ , բայց երբ կարհատեալ հանբողութիւն մը » :

Պատուելի Հովիւր լոնց , եւ բազմութիւնը սուրբ մտախոհութեամբ մը մեկնեցաւ անկէ : Արդոյ քահանային խօսքերն բազմութեան մտաց վրայ փրկառիթ տարութիւն մը ըրին :

Երբ Պ. Ֆարնէն , Մարիլս եւ Պ. Պերկման տուն վերադարձան , Քարօլին խնայքերեք զգասացեք էր : Թէպէտ իրմէ

պահած էին իւր քրոջն ու հօրը բացակայութեան պատճառը, բայց նա դժուարութիւն չունեցաւ իմանալու: Եւ զսան զինքն ի լաց:

Քոյրը ձեռնէն բռնեց եւ կուզէր զինքը մխիթարել. բայց այս գորովալիւր սիրոյ գործը ամենեւին չեարժեց Քարօլինին սիրքը: Քարօլին սկար միտուլը կը կարծէր թէ քոյրն արգելք եղած էր իրեն, իւր ծնողաց սէրը վայելելու, ուստի եւ անտարբեր կեցողով ընդունեց անոր զգուսնմաները, որով գորովագուր Մաքիլսին սիրքն առաւել եւս վեցացաւ:

Քարօլինին իրեն դէմ բրած անիրաւութիւնները զինքը ետ չձգեցին զանի խնամելէ. բոլոր հիւանդութեանը ասեմ' զիւրերէն եւ անոր բարձին քով անցուց, մինչեւ իւր վերջին նիգը խնամելով ու յանձանձելով զանի:

Երբ քրոջն առողջութեան նշաններն սկսաւ տեսնել, կուզար քովը կը նստէր, սիրաւոր գիրքեր կը կարդար, եւ անոր վրայ սիրած Տեսնութիւնը փարատելու հրեւարհներ կը փնտռէր. երբ քունէն կար-

բըննար, երբեմն պարտէզէն ժողված գեղեցիկ ու քաղցրահամ պտուղներ իրեն կը մատուցանէր, երբեմն զարդի վերաբերեալ մանր մունր նիւթեր կուտար, ինչպէս նաեւ սաղմեգործ մը, եւ ուրիշ այն ամէն բաները զորոնք գիտէր թէ խեղճ Քարօլինին զարդասիրութեանն ու հաշակիին հանոյ էին՝ անխնայ կը նուիրէր: Երբ կրցաւ ոտքի վրայ ելնել ու քայլել, ամենայն սիրով կօզմէր իրեն ու գորովալիւր խնամով մը անոր դողդոջուն քայլերը կը պատշտանէր: Երբ հիւանդը դալարագեղ գեղնի վրայ կը հանգչէր, Մաքիլս կերթար ծաղիկներ կը ժողվէր եւ անոր կը մատուցանէր, որոնցմով Քարօլին մագերը կը զարդարէր: Վերջապէս ամէն քաղցր ու փութաշաքան խնամքները կառասածեցնէր իրեն: Քարօլին այլ առողջանալով՝ իւր Մաքիլսի դէմ ունեցած ծուռ կարծիքներուն աննեւանալը տեսաւ:

Օր մը ըսաւ իւր քրոջը, սիրելի Մաքիլս, կը փափաքիմ քեզի հետ միասեղ մեր մօրը գերեզմանին այցելութեան երթալ. այս Տեսնալի պատճառութիւն մըն է, սակայն հարկ է ինձ կատարել:

Մաթիլ Վախնալով որ չըլլայ թէ այս սգալի այցելութիւնը սաստիկ սպաւորութիւն մը ընէ իւր քոջը վրայ, եւ անոր առողջութեանը վնաս մը բերէ, հնարքներ փնտռեց անոր միտքը փոխելու. բայց Քարոյին այնպիսի կերպով մը դէմ կեցաւ որ, հարկ եղաւ Մաթիլի նորա կամքին զիջանիլ :

Այս ազնիւ փոյրն՝ որ Քարոյինը ծանրապէս չհրճեցունելու համար դեռ սգոյ հանդերձ չէր հագած, այս անգամ երկուքը միասեղ սուգի հանդերձներ հագան :

Երկու փոյրերն դէպ ի գերեզման նանքայ ելան, եւ Պ. Յարնէն հեռուէն անոնց ետեւէն կերբար :

Երբ գերեզմանասուն հասան, ուղղեցան դէպ ի ամայի սեղ մը՝ որն որ սգազգեաց ուռնեցիները կը հովանաւորէին այս ահաւոր վայրը. այս անհատիկին մէջ կը բարձրանար ծաղկալից դալարագեղ բլրակ մը ուր սնկուած էր անպանոյն խաչ մը, որ նոյն սեղոյն գերեզմանասուն ըլլալուն նշանն էր: Մաթիլ ծնկան վրայ եկաւ Քարոյինին հով, եւ երկու փոյր յորդառաս

արցունքներ քափելով երկար աղաչանք մը մասուցին առ Աստուած իրենց մօրը հոգւլյն հանգստեանը համար :



Երբ աղօթքնին լմնցուցին, Քարոյին բռնեց Մաթիլին ձեռքէն, եւ սարաւ նըստարանի մը վրայ՝ որն որ հայրերինն սեղաւորած էր իրենց մօրը գերեզմանին հով, եւ նստան անոր վրայ: Խեղճ Քարոյինի սիրեն ելած էր. ողբալով բռնեց քոջը ձեռքէն, արժին վրայ սարաւ սեղմեց, եւ քանի մը վայրկեան առանց խօսք մը արսասանելու այնպէս կեցաւ, եւ արժին Եարժու մը քիչ մը հանդարտելով Մաթիլին վիզն ինկաւ, եւ ջերմեռանց սիրով փա-

րելով բաւ . ներէ ինծի , ներէ իմ սիրելի Մարիլսս , իմ ծուռ կարծիքներուս՝ որ քեզի դէմ կը սնուցանէի : Հիմա յամօք ինձ կը խոսովանիմ զայն . նախանձը արիս սիրած էր , չէի կրնար առանց նախանձելու տեսնել քու ձիրքերդ՝ որոնք քու հանապազօրեայ աշխատութեանդ պատուներն էին : Անիրաւաբար կը գանգատէի իմ ձեռքէս , եւ զինքն սգիտութեան բեռին տակ ննուած կը գտնէի : Ներէ ինծի՝ որ տարակուսեցայ քու սիրոյդ վրայ . բայց հիւանդութեանս ասեմ քու բրած անխնայ վեհանձնական խնամաստութիւններդ զիս համոզեցին ու հաստատեցին քու սիրոյդ վրայ : Ի միտ առի իմ բոլոր անիրաւութիւններս . եւ արդ կապալտեմ քեզի մտքի եւ ներէ իմ քեզի դէմ գործած յանցանացս : Ահա հոս , մեր բարի մօրը գերեզմանին վրայ , Աստուծոյ առջեւ՝ որ կը լսէ մեզ ամէն տեղ՝ կերդնում բոլոր նախանձութիւնները մէկդի բողոք . քեզի կընծայեմ իմ բովանդակ բարեկամութիւնս ու սէրս , եւ այսուհետեւ պիտի ջանամ քու քաղցրութեանդ ու հաստատութեանդ նմանելու :

Մարիլս ջերմագին արցունքներ բափելով փարեցաւ իւր քրոջը , եւ հաստատեց իրեն ըսելով թէ քու իմ վրաս ունեցած ծուռ կարծիքներդ՝ երբէք իմ քու վրայ ունեցած բարեկամութիւնս ու սէրս չպաղեցուցին :

Պ. Ֆարնէն ականատես էր այս արտասուած տեսարանին , եւ ուրախութեամբ ու դողդրդալով վազեց փարեցաւ իւր աղջիկներուն :

Երեք մէկտեղ դարձան իրենց բնակարանը . այնուհետեւ Քարօլին երջանիկ գտաւ ինքզինքն ասելութեան ու նախանձու կիրքերը յաղթելու համար բրած վեհանձն ջանքովը : Այս երդիքին տակ վերստին երեւցաւ ուրախութիւնը , ուր երկար ժամանակէ ի վեր խոր տրտմութիւն մը կը տիրէր : Այնուհետեւ ոչ միայն չնախանձեցաւ Մարիլսին ձիրքերուն , հապա նաեւ ինքն էր առաջինը՝ որ կը փափաքէր զայլ անոր քով նստիլ , ու գեղեցիկ նուազածերգութիւններ մտիկ ընել :

Պ. Ֆարնէն շուտ մը բողոք Մէրլաննէն , եւ երկու աղջիկներուն հետ եկաւ բնակեցաւ ի Պէրլին : Մարիլս ալ չմտաւ իւր

նուագագործ վարպետին քով, որպէս զի կարող ըլլայ իւր ծերունի հօրն ամէն պէտք եղած խնամքը սանել:

Քարօլին վերադարձաւ իւր կտաւագործունէւոյն տունը, եւ շուտ մը անանկ յաջողութիւն գտաւ, որ այս կիներ՝ արդէն հարկադրուած ըլլալով իւր գործերը բողոքով՝ զինքը իւր սանը գլուխ կարգեց, եւ իւր մէկ հասիկ տաղանդաւոր ու բարեբեօյր որդւոյն հարսնացուց:

Պ. Պէրկման՝ Մաքիլսին առաքինութեանցը վրայ զմայլած եւ սիրտն անոր կապուած ըլլալով՝ պսակուեցաւ անոր հետ, մտածելով որ ասանկ աղջկան մը հետ պսակուիլն մեծ երջանկութիւն մ'ըլլալէ զատ, Աստուծոյ օրհնութիւնն ալ իւր սանը վրայ բերել է: Ինքը քէպէտեւ չքաւոր է, բայց իւր առաքինութիւնները պատուականագոյն են քան աշխարհիս հարուստ զանձերը:

Պ. Ֆարնէն իւր երկու աղջիկներուն սիրայորդոր նպաստիւք զինքը երջանիկ վիճակի մէջ գտաւ, եւ իւր կենաց վերջին տարիները խաղաղութեան ու հանգստեան մէջ անցուց:



Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Պ Ա Ն

Ե Ի

Ի Ի Ր Ա Ղ Զ Ի Կ Ը

Մեր Պիլքարսը կանաչագեղ դալարի մը վրայ նստելով կրսէր իւր Կոստանդին աղջկանը. քիչ մը նստինք աղջիկս, վասն զի ոտքերս պալարներ բացուեցան, եւ ալ չեմ կրնար քալելու դիմանալ:

Կոստանդին նստաւ քովը ու սկսաւ լալ: Մերը դողդոջուն ձայնով մը ըսաւ իրեն, մի՛ լար, զօրացիր, աչքերդ վեր վերցուր, իմ հրեշտակս, քես ինչպէս երկինքը պարզ է, մերիկն անցաւ: Միայնակաւ հիւղը հանգստանալու չափ երբէք այնչափ հանգրստացեր էիր քու հօրդ տունը փեշալից անկողնոյ մը վրայ. աւելի եւս խաղաղ կերպով պիտի հանգստանաս, երբ խոստովին մտնիք՝ որ կը գոռայ յերկինս, դադրի:

Տես դու , հայրիկս , ինձի համար չէ
որ կուլամ :

Միտք բեր սիրելի զաւակս , որ մեր
մէջը պէտք չէ դու բառը գործածել մեր
բուն անունէն գաս :

Ճումարիս է , տես , սիրելի հայրս , ոտեր-
նիս արեան մէջ քաթաղեցան , մուճակնիս
ու սրունքնիս պատեցան , բայց ես ան-
տեսութեան կը համբերեմ . միայն քեզի հա-
մար է որ կը վճանամ . տեսնելով որ այդ
ծերունի հասակիդ մէջ մուրացկան կը
տրջիս , եւ այն ալ իմ պատճառաւս . սառ
վրայ սիրս կը խեխրեայ :

Գէպ ի Արեւմուտք նայէ , Կոստանդին ,
տես ինչպէս կապուտագոյն է երկինք : Գի-
տես ինչու համար կապուտ փոքրիկ ծա-
ղիկները *Միզոթի* (*myosotis*) կը կոչեն . եւ
կրնաս ըսել ինձի :

Վասն զի երկնագոյն են :

Կը տեսնես որ երկնից կապոյտ գոյնը
կը նշանակէ , *մի մոռնալ զիս* . եւ բնու-
թեան յասկեղ դալարութիւնը կը նշանակէ ,
չպիտի մոռնայ զիս . վասն զի կանաչը
յուսոյ գոյն է :

Շատ աղէկ , սիրելի հայրս , միտքս կը
բերեմ ինչ որ հանգուցեալ մայրս կըսէր
ինձ . երբ հրաբորբոք շերմեռանդ սէր մը
կը վերանայ յերկինս , անասնն երկինքէն
հաղցր , շնորհաձիր ու պայծառ օրհնու-
քիւն մը կ'իջնէ , որով մարդուս սիրքը կը
զուարթանայ , եւ ամենահաղցր կեանք մը
կը ստանայ :

Իրաւունք ունէր . բայց այս ուրախու-
քիւնը վայելելու համար պէտք է որ առաջ
որոտամն ու մերիկը զինքն յայտնէ : Տես
ինչպէս արեւն ամպերուն ետեւէն բո-
ցանահանչ կը ցոլանայ , շերմագին հա-
ռազայքներ կ'արձակէ մեր վրայ . եւ ինչ-
պէս եօթներփեան ծիածանն անտառին
բարձրէն մինչեւ կաղամախին վրայ կա-
մարածեւ ծագած է : Կարծեմ քէ բարե-
բաղդ բան մը պիտի պատահի մեզ :

Տես ալ այդպէս կը կարծեմ . վասն զի
մեր վճագին ցաւոցը մէջ զԱստուած նե-
ղացրնելու բան մը չըրինք :

Ձէ սիրելի զաւակս , դասապարտութեան
արժանի գործ մը չգործեցինք . բայց արդ'
ժամանակ է հանբայ ելնելու , վասն զի

դեռ շատ հեռու պիտի երթանք : Պատահաւոր հաց ունիս մախաղիդ մէջ :

Աստուած ողորմի մեզի , ըսաւ դեռահասակ աղջիկը հառաչելով : Այս խօսքերն ըսած ասեմ ջերմագին արցունքներ կը քափէին չափերէն : Փնտեց զսաւ մախաղին մէջ հինաւուրց չորաբեկ հացի կեղեւ մը , եւ զայն հօրը տալով սկսաւ առջեւէն փախել : Ծերն աշխատութեամբ հացին կեղեւը կրծելով ետեւէն կերբար :

Յանկարծ հեռուէն երիտասարդ մը տեսան որ գեղեցիկ խորագոյն ձիու մը վրայ նստած դէպ իրենց կուգար : Կոստանդին հեռուէն նանչնալով զայն՝ անտառին մէջ ծառերուն ետին պահուրքեցաւ , ու հօրը նշան ըրաւ , բայց նա չկրցաւ որոշել անոր նշանն եւ կը շարունակէր նանքան : Ծերը կարճատես ըլլալով չտեսաւ ձիաւորը , բայց երբոր մօտը եկաւ անոր ով ըլլալը նանչցաւ եւ մեղմ ձայնով ու երկիւղալի դէմքով մը ըսաւ : Աստուած տար որ նանչնար զիս այս ծայտեալ կերպարանովս :

Ձիաւորն ամենեւին միտ չդրաւ այս աղփաս նանապարհորդին , եւ առանց զանի

նկատելու փոխէն անցաւ զնաց : Անասեմ Կոստանդին անտառէն ելնելով , հօրը քեւէն բռնեց ու անտառէն դուրս հանեց :

Գիշերը մօտեցաւ , եւ աղփաս նանապարհորդները հանգչելու տեղ մը չունէին : Անասեմ ծերն սկսաւ մտածել թէ մարդասիրութեան աղագաւ զինքը բշուառութեանց ու աղէտներու մասնած էր , եւ կամաց կամաց անտառին մէջտեղէն նանքան շարունակեց :

Նոյն տեղէն քիչ մը հեռուն՝ անտառին վերջին ծայրը՝ Կոստանդին զանգակ մը տեսաւ , եւ ուրախանալով ըսաւ հօրը , սիրելի հայրս , ահա նկեղեցի մը , մեր փայլերը դէպ ի հոն ուղղենք :

Աղէկ , զաւակս , ըսաւ ծերը , բայց պէտք էր որ արդէն հոն գացած ըլլայինք : Եւ աղջիկն օգնեց անոր անտառին քիչ մը դիւրին նանքան հանելու . այս նանքան ուղղակի գեղը կը հանէր : Երբ հոն հասան , իմացան որ բոլոր զաւառին մէջ Գաղղիացի զինուոր մը չկայ . ասի մեծ ուրախութիւն պատճառեց իրենց : Խուճերը Ռէն գետին մօտեցեր էին :

Այս նոր լուրն եւս ուրախութեամբ յը-
ցուց գիրենք, եւ ապահով կերպով գեղը
բնակեցան :

Այս գեղը դիւրակեաց եւ հեշտին կեանք
անցրնելու տեղ մըն էր : Տուները մեծ եւ
գեղեցկաւէն էին : մարդիկ իրենց սան
դրան առջին նստած ցերեկուան աշխա-
տութեանց հոգնութիւնը կառնէին : փոքր
տղայ մանչ ու աղջիկ՝ անոնց մէջ կը
խաղային , եւ կանայք իրենց կովերը կը
դարմանէին , կամ զանոնք կըրելու զբա-
ղած էին :

Ճանապարհորդները բարեւեցին զգեղա-
ցիները , որոնք սիրով իրենց փոխադարձ
ողջոյներն անոնց մատուցին :

Սիրտ առ , աղջիկս , ըսաւ ծերը , կե-
րելի քէ բարեպաշտ մարդոց մէջ եմք ,
ուստի կրնաս սաղ մը երգել՝ որ կը յուսամ
քէ յօժարութեամբ պիտի մտիկ ընեն : Այն
ատեն Կոստանդին զնաց կայնեցաւ մեծա-
ւէն սան մը առջին , եւ սկսաւ ներդաշ-
նակաւոր քաղցրիկ ձայնով մը տալերգել :
Իւր Պիլփարս հայրը՝ մեղմ ու անոյժ ձայ-
նով մը ձայնակից կըլլար իրեն : Երբէք

գեղացիք աասնկ քաղցր ձայն մը լսած
չըլլալնուն՝ իսկոյն երգիչներուն չորս դին
բոլորեցան : Մերունի մը եկաւ խառնուե-
ցաւ ունկնդրաց բազմութեանը մէջ . տա-
րիքն իւր մարմինը կորացուցեր էր . իւր
հոգեւոր աշխատութիւնները մագերն սպի-
տակացուցեր էին , եւ ընդ երկար կրօնա-
կան կրթութիւններ՝ որոց մեկնիչն էր ին-
քը՝ իւր դէմքին վրայ քաղցր ու բարեւէր
կերպարանք մը տպաւորեւ էին , որով իրեն
կը յանկուցանէր բոլոր սիրտերը : Ասի
Պիլփարսին նման հինաւուրց հաստատակիտ
անձ մըն էր . պարզ ու մաքուր վարքը եւ
եռանդուն կրօնական նախանձախնդրու-
թիւնն այս երկու մարդոց յասուկ բնաւոր-
ութիւնն էին : Այսպէս տուտով հասկցուե-
ցան : Բարեկրօն ժողովրդապետ մտադրու-
թեամբ մտիկ ըրաւ այս տղը , եւ իւր ար-
տեսաւունքը արցունքներով ողորեցան :

Տաղը լմնալէն յետոյ ըսաւ , գեղացիներ-
ուն . հրամար էք գաւակներս , Աստուծոյ
վրայ վստահութիւն ունենալն է որ մեզ կը
պահէ չարիքներէ , եւ կառաջնորդէ փր-
կութեան հանապարհին մէջ :

Գեղացիներն առատօրէն վարձատրեցին երգիչները : Եւ ամէն կողմէն կը հարցընէին իրենց . ո՞վ էք դուք, ո՞ւրկէ կուգաք :

Պատասխանեց Պիւլֆարս . ես եմ Ֆրէշապուրկ (բռնաւորութեան ամրոցէն) կոմսութեան մէջ Էօնկլիւկսօսան (խղճութեան գեղէն) :

Էօնկլիւկսօսան, ըսին գեղացիք, չենք գտնչնար այս գաւառը, այդ գեղին վրայ բնաւ ծանօթութիւն չունինք :

Ժողովրդապետը կերպով մը գլուխը Եարժելով կը ցուցնէր թէ ինքը հասկցեր էր . եւ ըսաւ, Էօնկլիւկսօսան մեծ գեղ մըն է, ուր Եաճ բնակիչ կայ : Այս ըսելով ծերոյն ձեռնէն բռնելով աղջկանը հետ մէկտեղ Եարաւ իւր խաղաղիկ բնակարանը :

Այս օտարական աղբասներուն երգը Եաճ հանելի եղած էր գեղացիներուն . ուստի եւ գեղին վերակացուն խօսակցեցաւ տեղւոյն ազնուականացը հետ, հասկընալու համար թէ կուզէն որ այս ծերը գիտեային պահպանութեան պատճօնը վարէ : Առաջարկութիւնը ընդունուեցաւ, եւ որոշեցին որ հարցընեն Պիւլֆարսի թէ կուզէ գիտե-

րային պահապան ըլլալ : Այս որոշման մէջ չմտածուեցաւ իւր ծերունի հասակը, եւ չհարցուցին իրեն թէ բաւական կարողութիւն ունի այս պատճօնին աշխատութիւնները սանելու, եւ թէ կրնայ զող մը բռնել կամ հալածել : Ստոնց եւ ոչ մէկուն վրայ հարցում մը չեղաւ . հապա միմակ աղէկ կերգէր, եւ այսչափը կը բաւէր :

Վերակացուն ինչ մը Եսքը գնաց ժողովրդապետին տունը, եւ անոր հաղորդեց իւր խորհուրդը : Սա եւս գոհ ըլլալով անկէ՛ տուտ մը գնաց Պիւլֆարսին այս պատճօնին առաջարկութիւնն ընելու : Բարի ծեր, ըսաւ իրեն, մեր գիտեային պահապանը Բանի մը օր կայ որ մեռաւ, կուզէս անոր տեղը բռնել :

Պիւլֆարս վե՛տալից զգածմամբ աչքերն երկինք վերցունելով աղաղակեց . ո՞վ Տէր, Քեզմով պիտի կարողանամ այս պատճօնը վարել :

Վերակացուն զարմացեալ դէմքով մը գինքը դիտեց, եւ ըսաւ իրեն . ինչպէս պէ՛տք է իմանալ Բա խօսեցրդ :

Պիւլֆարս պատասխան տուաւ իրեն . կըն-

դունիմ այդ պատօսնն երախտագէտ արտիւ ,
 եւ լաւագոյն կերպով պիտի կատարեմ ինձի
 յանձնուած պատօսնին պարտաւորութիւն-
 ները :

Շատ ուրախ եմ աւոր, ըսաւ վերակացուն,
 հիմա կերբամ կը խրկեմ քեզի ցուպն ու
 եղջերափողը : Յուցակին կարգովը պիտի
 կերակրիս բնակիչներէն: Վաղը իմ տունս
 պիտի նստես : Այս գիշեր հանգստացիր ,
 եւ վաղը պիտի սկսիս պատօսնդ : Գեղին
 մէջ փոքրիկ բնակարան մը պիտի ունենաս :
 Քու աղջիկդ քեզ կը խնամէ , եւ պիտի
 կրնայ քանի մը սակ վասկիլ ասեղնա-
 գործութեամբ: Վասնզի ծանր գործերու յար-
 մար չեղեաւ : Դեռ չեմ հարցուցած հա-
 սարակութեան. բայց երբոր արգոյ ժողո-
 վրդապետը կամ ես բան մը կուզենք ընել,
 կրնանք գործադրել առանց վախճալու ժո-
 ղովրդեան սրտունջէն : Ստոյգ չէ , իմ ձե-
 րունի բարեկամս, ըսաւ մեծարգոյ Քահա-
 նային ձեռքը սեղմելով :

Պատասխան տուաւ ժողովրդապետը, օրհ-
 նեալ է Աստուած , որ հասարակութիւնը
 մեր վրայ վստահութիւն ունի, եւ ամենեւին

անոր վրայ զղջալու բան մ'ալ տեղի ու-
 նեցած չէ :

Օտարական ծերն ու իւր աղջիկը այս
 միջոցիս ժողովրդապետին տունն ըլլալով ,
 կսպասէին որ վերակացուն հեռանայ , եւ
 խորին ու իստուր խորհրդով զգածուած
 կերեւէին, որն որ կը ցուցունէր քէ ի հար-
 կէ անհասկանալի դժուարին պարագայի
 մը մէջ են , եւ որոյ լուծումը արտաքոյ
 կարգի բան մը կերեւէր անոր :

Երբ վերակացուն գնաց , Քահանայն
 բռնեց ծերոյն ձեռքէն , ու ըսաւ իրեն .
 բարի եկիր, այս գիշեր իմ երդիքիս սակ
 պիտի անցունէք : Աստուած հրամայեց մեզի
 հիւրասիրութիւնը, եւ պիտի չմոռնամ եր-
 քէք Տէրոջը հրամանները :

Սիրելի արգոյ ժողովրդապետս , ըսաւ
 Պիլքարս, ստոյգ է որ' մենք մեծ օգնու-
 քեան կատարելուն ունինք . եւ այն որ կը
 հնազանդի Աստուծոյ կամացը , հանդերձ-
 եալ կենաց մէջ Բարձրեղոյն աջ կողմը
 դատուելու կարժանանայ : Զմիւռնիոյ
 եպիսկոպոսին պատահած դէպքը մարդ
 կրնայ քեզի յարմարընել . կը նանչնամ

փու աղփասութիւնդ, բայց դու հարուս ես, վասնզի երկինք քեզի համար բաց են :

Ժողովրդապետը կասարեալ սիրով փարեցաւ ծերին, ու ըսաւ իրեն. — Ինչ, որպէս թէ Ղովս նահապետին նման՝ հրեշտակներ ընդունեցի տունս :

Կոստանդին հառաչելով պասասխան տուաւ իրեն. հրամարտեալ, ունեցար փու տունդ հրեշտակներ. վասն զի մեք մեզէն նանչցանք փու հիւրասիրութիւնդ :

Ժողովրդապետն ընդերկար շուարեցաւ. իրեն կը թուէր թէ այս աղփաս օտարականները այլակերպեալ ոգիներ էին : Երկչոտ դէմքով մը ըսաւ ծերին, կրնամ համարձակիլ հարցընել քեզի փու գաղտնիք. վասն զի ամէն ձեր վրայ տեսածներս կը ծանուցանեն թէ ցածուն վիճակի մէջ ծնած չէք դուք, ուր որ կը տեսնեմ զձեզ խոնարհած :

Ժպտեցաւ Պիլիպոս : Թէ որ ուզէի, ըսաւ, զիս յայտնել՝ քեզ կրնայի վստահիլ եւ կարծեմ նախ քեզի յայտնելուս վրայ չպիտի գոչայի :

Լուեց ծերը, եւ ժողովրդապետն ալ աւե-

լի հարց ու փորձ չըրաւ : Սեղան նստան, եւ չափաւոր ընթրիք մը ճաշեցին :

Ժողովրդապետին փոքր՝ որ ի վաղուց հետէ անոր հետ կը բնակէր, ծանր հիւանդութիւն մը զինքը յանկողին ձգած էր, ներմակեղէն եւ հանդերձներ ընծայ տուաւ Կոստանդինին : Ժողովրդապետն ալ նմին նման վարուեցաւ հօրը հետ, բայց չկրցաւ շատ բան մը զալ անոր. վասն զի իւր մարդասիրութիւնն այն աստիճան մեծ էր՝ որ ժողովրդեան ամէն աղփասներուն վրայ կը սարածէր, թէպէտ ինքը խոր ծերութեան հասած էր՝ բայց եւ այնպէս իւր խորին ծերութեանը մէջ իսկ՝ կարօտեալներուն օգնելու համար շատ անգամ զինքը կարեւոր բաներէ կը զրկէր :

Հետեւեալ օրը Պիլիպոս իւր պաշտօնին մտաւ : Կոստանդին սկսաւ իւր սպասները կասարել զիտերային պահապանին՝ իւր հօր՝ աղփասիկ բնակարանին մէջ. եւ երեկոյին երբ հայրն իւր առաջին շրջագալութիւնը կասարեց, անոր հետ ընկերանալով ի միասին փաղցրանուագ տալ մը երգեց : Գեղին խաղաղակեաց բնակիչ-

ները մեծապէս գոհ եղան իրենց գիշերային
նոր պահապանէն , եւ կուսային իրեն ինչ
որ կրնար անոր վիճակը դիւրասար ընելու
նպաստմանոյց ըլլալ :

Հայր Պիւլֆարս շուտով բարեկամութիւն
կապեց գեղացիներուն հետ , այնպէս որ
գեղին մէջ առանց իրեն հարցուելու բան
մը ի գործ չէր դրուէր :

Կոստանդին ծաղկահասակ դեռաբոյս
աղջկանց զինքը մաքրակենցաղ ու համես
վարուց կենդանի օրինակ կընծայէր, որով
կը ջանային ամէնքն անոր նմանելու :
Հայրն ու աղջիկը երկուքը մէկտեղ գաւա-
ռին բնակչաց համար գրեթէ համարիս
պահապան հրեշտակներ էին :

Իրենց գալը երեք ամիս եղած էր , եւ
Սեպտեմբեր ամսոյ մէջ էին : Պիւլֆարս ու
իւր աղջիկը գոհ սրտիւ կապրէին , եւ զի-
րենքն Ս.սուծոյ կամացը յանձնած կսպա-
սէին որ Լենք բարեհաճի իրենց վիճակը
բարւոյնէլ :

Սեպտեմբեր ամսոյն երեկոյեան ժամը
մէկին՝ երբոր սկսան իրենց առաջին Երջա-
գայութիւնն ընել գեղին մէջ , Կոստանդին

դիտեց տեսաւ որ մարդ մը իրենց կը հետե-
ւէր , եւ երգած սաղերնուն ունկնդրութիւն
կընէր : Երբ երգելու կը կենային , ան ալ
կը կենար . եւ երբ նանքայ կելնէին , ան
ալ իւր նանքան կը շարունակէր : Ասանկով
մինչեւ զերեզմանատուն հետեւեցաւ եկաւ .
երբ հոն հասան , յանկարծ այս մարդը
աներեւոյթ եղաւ :

Կոստանդին այս բանին նկատմամբ հօրը
բան մը չըսաւ . վախճալով որ չըլլայ թէ
զինքն անհանգիստ ընէ . սակայն իւր սիրտն
ալ հանգիստ չէր : Վերջը զինքն հանդար-
տեցրնել ջանալով՝ զանի նանապարհորդ մը
համարեց , որ գիշեր ասեմ գեղէն կանցներ՝
եւ երգած սաղերնին մտիկ ընելու համար
իրենց կը հետեւէր . ուստի զինքն Ս.սուծոյ
կամացը յանձնելով սկսաւ սաղ մը երգել,
որուն սկիզբն էր . « Ինչ որ Ս.սուծած կընէ՝
այն բարի է » :

Երբ գեղին վերի քաղը հանող նանքուն
բերանը հասան՝ որուն երկու կողմը ցան-
կով Երջապատեալ էր , յանկարծ երեք մար-
դիկ ցանկին վրայէն ցարկեցին : Երկուքն
առջեւնին անցան , միւսն ալ հետեւին :

Երկուէն մէկը սկսաւ պօռալ . « Զայն չհանէ՛ք , եթէ ոչ կը սպաննուիք » :

Ասոնք մէկ բերան պօռացին , « Տէր , ողորմէ մեզի » : Ասուած լսեց ասոնց ձայնը , եւ աղաչանքնին ընդունեց : Այս միջոցին երկու գեղացի՝ որ գեղը կը մթնէին , ասոնց պօռալու ձայնը լսելով վազեցին հոն , եւ անոնց վրայ յարձակող երեք մարդոցմէն երկուքին վիզէն բռնելով օգնութիւն կը խնդրէին :

Կոստանդին գեղացիներն օգնութեան կանչելու համար կայծակի արագութեամբ գեղը վազեց :

Այս միջոցին մէկը վազեց հոն՝ որ հեռմակ վերարկու մըն էր հագած , եւ երբ երոզը յարձակողն այս մարդուն մօտեցալը տեսաւ , դանակը փառեց « Իջի՛ր անիծեալ Լօթաննէն ի դժոխս » պօռալով՝ խորեց Պիլֆարսին մարմնոյն : Այս սոսկալի բարբառասութեան գործը կատարելէն յետոյ փախչելու երես բռնեց :

Լօթաննէն , պօռաց սպիտակ վերարկու հագնող նորեկ երիտարդը յուսահասական ձայնով մը , Լօթաննէն , իմ հնչյւն :

Աս խօսքերը զրուցելով շուտա՛մ ինկաւ ծերոյն ոտերը : Գիւղացուց այս այլալուքեան միջոցին երկու չարագործները փախչելու առիթ գտան :

Վերջը Կոստանդին օգնական մարդիկներովը հասաւ , բայց ամէն բան վերջացեր էր : Զարհուրեցաւ սասանեցաւ իւր հոգին՝ երբ տեսաւ որ հայրն օտարականի մը ղուկ գտնելի վրայ փռուեր ինկեր էր : Կոստանդին կարծեց թէ այս օտարականն էր իւր հայրն սպաննողը :

Գեղացիք փութացեր եկեր էին անոր օգնութեան հասնելու , որոցմէ մմանք կը ջանային երիտարդին խելքը գլուխը բերել , եւ մմանք արիւնն արգիլել , որ վտակօրէն կը հոսէր ծերոյն վէրէն :

Երիտարդը գլուխը վերցուց , եւ հոգեվարին ծուկներուն փառելով՝ նուաղեալ ձայնիւ աղաղակեց , « Ո՛վ հայրս , իմ հայրս . բու օրհնութիւնդ . ես բու որդիդ եմ : »

Շարլէզ , կարելի՛ բան է , պօռաց Կոստանդին . դո՛ւ ես իմ եղբայրս , ուրեմն դարձեալ իրար կը տեսնենք : Այսպէս ըսելով նետուեցաւ անձանօրին ճիւղ , եւ գորովալիբ

սիրով փարեցաւ անոր : Ետք աչեքն երկինք վերցրնելով աղաղակեց. Տէր, զի կարողութիւնդ անբաւ է, Տես մեր ցաւը, եւ ողորմէ մեր արցունքներուն . շնորհէ մեզի մեր հայրը. որք մի բողբոս մեզ երկրիս վրայ :

Բոլոր գեղացիք այս ձախող լուրը լսելով վազեր եկեր էին սպանութեան տեղը : Իմաստուն ժողովրդապետք սառապելոց անխընայ հոգեւոր օգնութիւններ մատուցանելու համար հոն հասեր էր :

Վիրաւորեալը ժողովրդապետին տունը տարին, ինչպէս որ կամեցեր էր այս արժանապատիւ ծերը :

Երկու որդիք հոգեվարժին գլուխը կը պատշտանէին : Ոմանք փութացին երթալ վիրաբոյժը բերելու, որուն դարմանները ծերին խելքը գլուխը բերին : Իւր առաջին նայուածքը Կոստանդինին վրայ ձգեց :

Աղջիկս, պօռաց, օրհնեալ է Աստուած, դու ազատեցար իմ կողոպտիչիս ձեռքէն :

Կոստանդին պատասխան տուաւ անոր . նն՛ իմ սիրելի հայրս, բու կենացդ գնովը գնուած իմ ազատութիւնս բոլորովին անպիտան կըլլայ ինձ . զայս ըսելով հօրք բռ-

վը ծնկան վրայ գալով, համբուրեց անոր ձեռքը, եւ շարունակեց, ես աղաչեցի զԱստուած որ բարեհաճի բու կեանքդ փրկել, եւ դու ինձ սովեցուցիր չխնդրել Աստուծմէ այն բաները՝ որոց համար ապահով չէիք էլ կը լսէ : Ձէ, չպիտի մեռնիս դու . ապրէ, դեռ մեզի քաղցր ու մախուր ուրախութիւններ պահուած են :

Վիրաբոյժը վիրաչափ գործին վերին մէջ խօսելով՝ յայնեց քէ վերքը մահառիթ չէ, բայց հիւանդին վիճակը հանդարտութիւն կը պահանջէ :

Շարլէզ արահին մէկ խորը ծունկի վրայ եկած լո՛ւկ մնջիկ կաղօթէր . կը ցանկար գալ ծերոյն ծունկերն իյնալ, բայց կը վախճար որ իւր անակնկալ վերադարձը՝ զոր կորսուած կը համարէր, եռանդուն սպաւորութիւն մը ընելով, մահառիթ վճանգ մը չը պատճառէ իւր հօրը :

Ամէն մարդ քառուեցաւ գնաց . եւ ժողովրդապետք միայն ասոնց հետ սենեկին մէջ մնացին, Կոստանդին եւ իւր եղբայրը . (այս վերջինը հետուն խորք մը նստած էր, որպէս զի ծերը կարողանայ կանքեղին

աղօս լուսովը զինքը նւարեղ) : Վիրաւորը ըստ ժողովրդապետին :

Իմ մեծարգոյ բարեկամս , այսօր հանչցայ քու արտիզ բովանդակ բարուքիւնն ու ազնուութիւնը . ի վաղուց կուգէի իմացունել քեզ իմ գաղտնիքս , ապահով ըլլալով որ զայն հաւատարմաբար ի ծածուկ կը պահէիր : Բայց այսօր որովհետեւ ալ իմ անունս ծանօթացաւ , այսուհետեւ զգուշութիւնը անօգուտ է . կը ցանկամ իմ բռնառութիւններս յայտնել : Ես եմ Պալզանօրֆի ներքին խորհրդականը :

Կոստանդին տեսնելով որ ծերը կը սկսէր յոգնիլ , աղաչեց զինքն որ դադարի խօսելէ . եւ ինքը շարունակեց անոր սկսած պատմութիւնը :

« Պալզանօրֆ իշխանն օտարական ծառայէ մը սպանուեցաւ . իմ հայրս յանձն առած էր ժառանգաւոր իշխանին կրթութիւնը , եւ ինքը կը վարէր իշխանութիւնը : Ասուած գիտէր քէ ինչ անշահախնդրութեամբ կը կատարէր իւր պատօտը :

Այդ բանին վրայ մի խօսիր աղջիկս . ես միայն իմ պարտաւորութիւնս կատարեցի :

Շարունակեց Կոստանդին . « Ես եղբայր մը ունէի որ Համպուրկ գացած էր , իմ հօտեղբայրներէս մէկը տեսնելու համար : Իւր երթալէն ի վեր լուր մը չտուինք իրմէ :

Ո՛հ՛ ըստ ծերն ի խորոց արեւ հառաչելով , երբէք չպիտի տեսնենք զինքը : Թէ որ դեռ ողջ է , Ասուած անելոյքնէ իւր օրերը , եւ իմ վիճակէս գերազանց վիճակ մը պատրաստէ իրեն :

Մի վշտացրներ դու քեզ հայրիկս , քու որդիդ դեռ ողջ է , եւ կուգայ քու ծերութեանդ բարեբաւտիկ օրեր վայելել տալու :

Երբոր Ասուած այս շնորհը ինձ պարգեւէ , կը փութամ վերադառնալ իմ հայրենիքս :

Շարլէզ այս խօսքերը լսելով խրտեցաւ տեղէն եւ ուզեց գալ նետուիլ ծերոյն գիրկը . բայց Կոստանդին նշան ըրաւ որ իւր տեղը կենայ :

Կոստանդին Դարձեալ իւր պատմութեան քելը ձեռք առաւ . « Իմ մայրս ազնիւ եւ բարեպատէ կին մ'էր , որ զիս կրօնի ու բարոյականի սկզբունքներով կրթեց , եւ մեծցայ առանձնակեցցալ վիճակի մէջ . բայց

այս արգելի չեղաւ ազնուական երիտասարդի մը մտերգին կրիցն եերակայ ըլլալուս: Հօրս գգուշուրիւնն ու մօրս հոգեբը՝ որոցմով կը ջանային ամէն արաս նայուածքներէ ազատ պահել զիս, կարող եղան զիս անոր զազիր խորհուրդներէն ապահովել:

Ազատեցար անկէ երջանկաբար, աղջիկս, աղաղակեց ծերը:

« Խոռովութիւնը ծագեցաւ Գաղիոյ մէջ եւ քանի մը տարիէն վերջը պատերազմը բորբոսեցաւ մեր գաւառին մէջ: Գաղիացոց առաջին յարձակումը մեզի շատ նեղութիւն տուաւ, բայց քանի մը տարիէն հետք մասրիացիք Բուսիացոց հետ միաբանած հալածեցին յափշտակիչները, եւ կեցանք ազատ շունչ առնուլ: Ապստամբութեան ոգին արմատացած էր մեր գաւառին մէջ. ուսի խռովութեան ծագումն արգիլելու համար հայրս խստութեան միջոցներ ձեռք առնելու հարկադրեցաւ: Այս խստութիւնը նոր գաղափարի կուսակիցներուն բարկութիւնը շարժեց, ուսի եւ երդում ըրին որ հօրս վրայ մտնուաւոր անտրտութիւն մը պահեն: Ինձ հետամուտ եղողն

ալ հօրս բեռամիներուն մէջն էր: Զինուց վիճակը քէւե Գերմանացոց քաջութիւնը յայտնեց՝ բայց եւ այնպէս ազատ բողուց սահմանազուխը մեր բեռամիներուն: Գաղիացի զօրեքը վարեցին քաջերը մինչեւ Ռէն գետ, եւ սիպեցին զանոնք դարձեալ անցնելու այս գետը: Անոնց մօտեալը տեսնելով ամէնքը փախան. բայց հայրս որոշեց իւր դիրքին մէջ կենալ եւ բնակչաց վտանգներուն մասնակից ըլլալ՝ որոնք իրենց բնակութիւնը բողուցած չէին: Զուգեց նաեւ իւր ծերութիւնն անօգնական բողուլ:

Ի սկզբան՝ Գաղիացիք հօրս առաքիւնութենէն ակնածելով՝ անոր հետ յարգութեամբ վարուեցան. բայց շուտով զոջացին չհետեւելուս անոնց խորհրդոցը՝ որոնք խրատած էին մեզ վերահաս բռնառութենէն փախչիլ.

Այս ապստամբներուն զլուխն էր ինձի հետամուտ եղող անձն, որ գաւառին գործերուն զլուխ ըլլալու համար ամէն ջանքի գործ դրաւ, եւ յաջողեցաւ: Հայրս միտս անոր կամացը դէմ կեցած ըլլալուն համար անորի եղած էր իրեն, ուսի եւ այս

անգամ պատեհութիւն գտաւ անկէ վրէժ լուծելու : Ուզեց բռնութեամբ պահանջել՝ ինչ որ ջանացեր էր խորամանկութեամբ ձեռ բերել :

Մեր չարիքներն ասկէ կը սկսին : Ձեմ կարող եղի հասկըրնել քէ ինչէր փաշեցիմ : Քիչ քիչ ինչներնիս ձեռներնու յափեսակուեցան , ամէն նպաստներէ զրկուեցանք , բաց ի անմեղութեան հարսութեանէն : Աստուած՝ որ միշտ պաշտպաներ էր զմեզ , մոլութեանց ապականիչ հովէն պահպանեց զիս :

Մեր բռնամիտ իւր անիրաւութեանց սա կնիքը դրաւ . չարախօսելով հօրմէս , որպէս քէ քանի մը բնակիչներու զլուխ անցած՝ խստութիւններ գործած էր Գաղիացի զօրաց դէմ :

Այս ամբասանութեամբ՝ Գաղիացուց իշխանութիւնը մեզ բռնեց եւ նեւեց ստորերկրեայ խաւարային անձուկ բանսի մը մէջ :

Մտոցայ եղի բսելու քէ պատերազմին ծագումէն քիչ ժամանակ առաջ մայրս մեռած էր :

Մեր բանտարկութեան ասեմ ինչ ինչ չարիքներ կրելէ վերջը , քանի մը աղփատ գործաւորներ՝ որոնք երախտիք գտած էին հօրմէս , բանէն փախչելու համար օգնեցին մեզի : Երբ ազատութիւն գտանք , պատաստանու հանդերձներ հագնելով՝ փութացինք սահմանազուխն անցնիլ : Առաջին անգամ՝ ապահովութեան մէջ՝ հասարակաց դրան առջեւ տղեր երգելով հացերնիս նարեցինք : Քիչ մը ետք իմացանք քէ հրաման տուած էր որ Լօրանէն խորհրդականն ուր որ գտնեն՝ բռնեն . ուստի պարտաւորեցանք զաւտուիմ մէջ յառաջ երթալ : Բայց անցագիր չունենալով չէինք կրնար Ռէն գետն անցնիլ , որ պատշաճուած էր զօրաց գունդերէն : Այն ասեմ պատշաճ դատեցինք զաւտուէն հեռանալ , ուր որ զօրքեր կը կենային :

Ասկէ կէս մղոն հեռու՝ նանքան իմ հալածչիս պատահեցանք , եւ իմացանք քէ Գաղիական պատշոնասարի մը կերբար : Ես հագիւ ժամանակ ունեցայ անտառին մէջ նետուելով պահութելու . իսկ հայրս զինքը չտեսնելով փովէն անցաւ . օրհնեալ է

Աստուած որ ծայտալ ըլլալով անոր ուշադրութենէն վրիպեցաւ: Հայրս իւր բռնամիներուն հետամտութենէն ազատ մնալու համար՝ գիշերային պահպանութեան պատճառով յանձն առաւ, որն որ գեղին բնակիչներն իրեն մատուցին: Ուստի այս մեր վրայ յարձակողները մեր բռնամիներն պէտք է ըլլան, վասն զի գողի մը ցանկութիւնը գրգռելու բան մը չունէինք: Քրեաւն նոյն ինքն իմ հետամուտս էր այս բարբարոսական գործը կատարողը: Ինչ որ է, հիմա պէտք է որ այս գաւառը բողոքուի:

Բարեկամներս, ըսաւ իրենց ծխաւէր հանայն, կը յուսամ որ պիտի կարողանամ իմ ձեռնտուութիւնս ձեզի մատուցանել: Քաջ երիտասարդի մը գալստեանը կըստատեմ՝ որ քանի մը վայրկեանէն կը հասնի, եւ որ այսինչ անուն դոսին ներքին խորհրդականն է, ուստի այս գաւառին հրամայող հաստուածեալ զօրապետին հետ ի միասին՝ կարելու ծառայութիւն մը կրնայ ընել ձեզի:

Մերն այս անակնկալ միաւորութեան պատրաստութիւնով՝ հետեւեալ օրն առաւօ-

տուն Լօրանհետեան երիտասարդ ներկայացաւ իւր հօրն առջեւ:

Ուրախութեան առաջին ներգործութենէն ետք. ըսաւ ձեր Շառլէզին, իմ սիրելի զաւակս, ըսէ ինձի, ինչպէս եղաւ որ դարձեալ զեղ սեւնալու արժանացայ:

Ինձ պատահած դիպուածոց պատճառով ետքի բողոքուի, ըսաւ իրեն երիտասարդը, հիմա անոր զլխաւոր մասերը քեզի կը պատմեմ, որոնք մեր իրարմէ հեռու մնալուն պատճառ եղան:

Երբ Համպուրկ հասայ, իմ բարեկամիս հետ վստանքի հանդիպեցայ, առանց մեր կողմէն պատճառ մը տալու: Որովհետեւ քաղաքացոց ընկերութեան բազմութեանը մէջ՝ զորս ինձի մեծաւոր երեւցան, մէկը չէի նանչնար, եւ երբ հարց ու փորձ ըրի, խոստացան զիս հօրեղբորս ներկայացնել, որուն հետ, սերս սիրով կապուած եմ կըսէին: Մովեզրին մօտ ընդարձակ շէնքի մը մէջ կեցանք: Օտարականներէն մէկը դուրս եղաւ, եւ քիչ մը ետք վերադարձաւ, յոր բերելով թէ հօրեղբայրս նաւու մը մէջ կը գտնուի՝ որ առաջապատեալ բանալու վրայ

էր, եւ նաւապէսը վերջին հրահանգները կուսար: Սրասեցին զիս շուտով մը վրայ հասնելով՝ երբալ զինքը գտնել. որչափ որ նաւը չէի տեսներ, փութացի երբալ: Բարեկամս ու ես ելանք նաւը, եւ դեռ նոր հասած էինք, երկաթը վերուցին: Անասեն հասկըցանք թէ սոսկալի խաբէութեան մը զոհ եղած էինք: Աղաչեցինք որ մեզի ազատութիւն տան, բայց անօգուտ եղաւ: Այս կերպով հասանք Ամսդէրսամ, եւ անասեն Հոլանտա պատերազմ ունենալով Ամերիկայի հետ՝ պատերազմական նաւու մը մէջ դրին մեզ: Մեր նաւարկութենէն քանի մը օր ետքը բարեկամս անցաւ արեւելեան Հնդկաց նաւու մը մէջ, որմէ վերջը իմացայ թէ Բարեյուսոյ Գլուխը կազարիայի մէջ մեռեր է:

Լուսիանիա հասնելով Գերմանացի երեւելի երկրագործի մը հետ յարաբերութիւն հաստատեցի, որ վերսին զիս գնելով իւր տունը խրկեց: Այս մարդը տեսնելով որ օրէ օր Եւրոպա տեսնելու փափաքս կաւելնար, խոստացաւ զիս դրկել: Նաւողչէքս վճարելու համար Եւրոպա վերադարձող նա-

ւուն մէջ ծառայութիւն ըրի: Թշուառաբար Անգղիական միայրակ նաւէ մը բրտնուեցանք որ մեզ Իրլանտա գերի տարաւ: Գերութիւնն անտանելի գալով ինձ՝ Արեւելեան Հնդկաց նաւու մը մէջ ծառայութեան մտայ, եւ ուրախութեամբ Բենկալայի նանապարհորդութիւնը կատարեցի ուսկից երկու ամիսէն ետքը վերադարձանք Լոնտրա, եւ ուր Գերմանացի իշխանի մը հետ ծագորութիւն ունեցայ, որ ինձի մարդասիրութիւն ցոյց տուաւ, եւ իբրեւ մասնաւոր փարսուղար՝ զիս իւր փովն առաւ: Իրեն հետ Հիւսիսային գաւառներն ծովային նաւորդութիւն մը ըրի, եւ իշխանին հօրը մահուանէն ետքը ներքին խորհրդական եղայ:

Այս բարեբաղդ պատահումէն ի վեր կուզէի ֆեզի նամակ մը գրել, բայց ֆեզի յանկարծ ուրախանիք զարգացում մը պատահաւելու ցանկութիւնը՝ զիս կարգելու միտ: Հուսկ յետոյ Գաղղոյ հետ պատերազմը վրայ հասնելուն՝ չկրցայ այս խորհուրդս կատարել: Վերջապէս երբալու հրտման ստանալով եկայ այս գաւառին մէջ, ուր ամենեւին չէի կարծեր գտնել

եեզ այս աղփատիկ կերպարանով, եւ փու
աստիճանիդ անարժան պատօտի մը մէջ-
բայց օրհնեալ է Աստուած որ դարձեալ
իրար տեսնելու արժանացանք :

Խօսք մը, խօսք մը միայն, սիրելի զա-
ւակս, ըսաւ իրեն ձերը վսեմ բարբառով
մը, հաւատարիմ մնացիր փու կրօնիդ :

Այն, հայրս, հաւատք երբէք չըրողուցի-
որն որ փու ինձի տուած կրքութեանցդ
պտուղն է: Եւ իմ վաս օրերուս մէջ նանչ-
ցայ թէ որքան հարկաւոր է կրօնք մ'ու-
նենալը, որով կրնայ մարդ գիտնել իւր վիճ-
եցումն մէջ մխիթարել, որմէ դու զեեզ
զուրկ կը զտեսնիր սոսկ բանականութեամբ:
Այն, հայրս, ես փրստնեայ եմ, փրստնեա-
լար պիտի ապրիմ, եւ փրստնեայ պիտի
մեռնիմ :

Մերունի Լօրաննէնք' փիչ օրէն նանա-
պարհորդութիւն ընելու չափ բաւական
գօրութիւն տեսցաւ: Յէպէտ իւր հին բա-
րեկամ ժողովրդապետէն բաժնուիլն իրեն
տաս ցաւագին եկաւ, բայց տղուն բաղձա-
նացը դէմ չկրցաւ կենալ :

Իրենց տեղը հասնելով ձերունի Լօրան-

նէնք իւր ձիրքերուն արժանավայել գոր-
ծակալութիւն մը ձեռք բերաւ :

Քիչ աստեղէն ետք իմացան որ իրենց
բնամիկ իւր հակառակորդաց հնարիւքը
սպաննուած էր :

Լէնսանպուրկի բնակիչները միտք կը մը-
տածէին իրենց գիշերային ֆաշ պահապա-
նին վրայ, եւ կը ցանկային անոր իմաս-
տուն խրատներուն :






Լ Ո Ւ Ի Զ

Հազար եօրը հարիւր իննսուն երեք դարուն վերջերը ֆաղաֆական խոռվութիւնն ու ապսամբութիւնը Գաղիան սակն ու վրայ կրնէր, բայց Վօկժիա լերանց մէջ խաղաղութիւնը կը տիրէր : Այս գաւառին բնակիչները միմեանց հետ եղբայրաբար կենցաղավարելու սովորած ըլլալով՝ ազնուականաց դէմ ասելութիւն սնուցանելու պատճառ մը չունէին : Ասոնց մէջ ազնուականը՝ լիաձեռն բարեբարութիւններ բնելու ձեռնհաս բարեբաղդիկ անձ մը կը համարուէր :

Վօկժիացիք սակաւապետ ու զգաս կեանք մը վարելով՝ չէին զգար այն կարոտութիւնները, որոնք ֆաղաֆացիները կը տառապեցընէին, եւ կարեւորութիւն իսկ չէին տեսնէր պերճաւոր իշխաններուն, որոնք բազմացեր էին գաւառին մէջ .



որովհետեւ գիտէին թէ՛ պերճուքիւնները՝
 գորոնք իրենցմէ ոմանք արժուցիւքն բերած
 էին , չէին կրնար մարդս երջանիկ ընել :
 Նախկին դարերու մէջ մարդիկ իրենց ար-
 ծանաւոր եղած իմաստութեամբն ու պար-
 զութեամբք ինչ բան որ մարդուս կենաց
 կարելու պիտոյէն դուրս էր՝ կարհամար-
 հէին իբրեւ դասարկակեաց մարդու մոլու-
 քիւններ , որոնք երկրագործ մարդու հա-
 մար անպիտան են : Երկրագործը տարուան
 պարէնը կը խնդրէ երկրէն , եւ միայն աւ-
 խասութեան հետեւորդ հանգստութիւնը կը
 նանչնայ : Այս բարի գեղջուկներուն վար-
 քը բոլորովին համանման էր նահապետա-
 կան կենաց : Ամբողջ շաբաթ մը՝ շարու-
 նակ կաշխատէին , եւ իրենց նուիրական
 հանգստութեան օրն էր մինակ կիրակի եւ
 օրն օրերը՝ գորոնք կասարեալ սուրբ կը
 պահէին , նաեւ օրուան մէկ մասն ալ
 բարեպաշտական կրթութեամբ կանցընէին :

Ասոնք քաղաքական կարօտութեանց ան-
 գէտ պարզ ախորժակով մարդիկ ըլլալով՝
 հայրենիքը սակն ու վրայ ընող մեծայոյզ
 շարժմանց առջեւ առանց փառասիրու-

քեան գրգիռ մը զգալու , սոսկ դիտող կը
 հանդիսանային . որ յեղավորութեան
 մերիկներու մէջ ամենէն քաջակուռ մար-
 դոց վրայ կը յարձակէր , եւ ուրկէ միայն
 աննմարին վնասներով կրնային ազատիլ :

Ասոնք կրցած էին իմանալ թէ՛ մարդս շատ
 անգամ իւր փառասիրութիւնն ու հպարտու-
 քիւնը գոհ ընելու համար՝ իւր կեանքը
 վնասգի մէջ կը ձգէ , զոր կրնար հանդար-
 տութեամբ նուիրագործել : Այսպէս Վօկ-
 ժիացիք ամենեւին խռովութիւն մը չէին
 յարուցաներ ազնուականաց դէմ , որոնք
 կուգային անոնց ֆով պատասպարան մը
 փնտռելու . գորոնք հալածեալ տեսնելով՝
 իբրեւ իրենց թուառ եղբարքը՝ զանոնք
 իրենց գրութեան արժանի կը համարէին :

Էքիմալէն երեք մլոն հեռու կը բնակէր
 Վօրէեան կոմսը , որուն ընտանիքէն իջած
 էին երեւելի դասաւորներ , որոնց ամէն
 մէկն իրենց հայրենաժառանգ սովորու-
 քեան համաձայն հաւատարմութեամբ հայ-
 րենեաց պարսփերնին վնասելէն ետքը՝ կը
 մտնային հայրենի վաղնջական բնակարան-
 նին : Իրենց բնակարանը ուր քաղաքայ-

նոց կեանքն ու գեղջկայնոց անկեղծ մար-
դասիրութիւնը միմեանց աշակցեալ կը
բնակէին, բաց պասսպարան մ'էր ամէն
անոնց' որոնք դժբաղդ դէպքերէ վերջին
ծայր խստութեամբ կը հալածուէին : Վոս-
րէեան բնասնեաց անդամներէն ամենքն
ալ ազնիւ զգացմանց մէջ մեծնալով՝ կրօ-
նական խղճմանհով մը իրենց նախնեաց
բարեարութեան աւանդութիւնը կը պա-
հէին :

Արեւնի խմբի մը գնդապետ՝ Վոսրէեան
Շարլէզ՝ Գերմանացոց պատերազմին մէջ
ազդու վերջ մը առնելով բողոց իւր պաշ-
տօնը . եւ քանի որ յեղափոխութեան խռո-
վութիւնը կը շարունակուէր իւր հայրեն-
եաց մէջ, ինքն ալ իւր նախնեաց ամբողջ
հաշուած խաղաղիկ կեանք մը կանցու-
նէր, եւ երբէք խռովութեան առիթ տուող
վէճերուն չէր մասնակցեր : Այս մարդը
մօտ տեղերու իշխանի մը աղջիկ Ռենեան
իմաստուհի Եղիսաբեթին հետ ամուսնա-
ցած ըլլալով՝ անկէ սիրուն ու գեղեցիկ
աղջիկ մը ունեցաւ . այս իմաստուն իշ-
խանն իւր բոլոր պարապ ժամանակներն

իւր սիրելի Լուիզը կրթելով կանցընէր :
Մայրը զինքը գերաւարհիկ առաքի-
նութեանց սկզբանցը մէջ կը մեծցընէր, եւ
խղճմանաց հոգածութեամբ մը անոր կրօ-
նական կրթութեանը վրայ կը հսկէր : Սէպ
կրտէր իւր աղջկանը, իմ սիրելի գաւախ,
առանց կրօնքի մարմնաւոր կրթութիւն-
ներն անօգուտ են . Աստուծոյ գերազոյն
արդարութեան վրայ եղած հաւատքը՝ որ
չարերը կը պատժէ ու բարեները կը վար-
ձատքէ, ամէն առաքինութեանց հիմն է :
Արդարն՝ աստի կենաց նախնուն մէջ՝ հան-
դերձեալ կենաց մտիքարական մտածու-
թեամբը զինքը կը պատշապանէ, եւ անով
գործնալով՝ փորձութեանց ու չարեաց դէմ
դնելու, եւ համբերութեամբ տանելու կա-
րող կըլլայ . որոնք յանախ բարեպատս ու
երկիւղած անձանց վրայ կը յարձակին :
Այս ջանքին մէջ՝ Վոսրէեան տիկնոջ մե-
ծապէս ձեռնտու եղած էր Կրանդեանի
վանահայր մեծարգոյ անձը, որ մօտէն
տեսնելով քաղաքաց մէջ պատահած ապա-
կանութիւններն ու մոլութիւնները՝ եկած էր
լեռանց մէջ հանդարտութիւն ու խաղա-

դուքիւն փնտռելու . որոնք զինքը հալածական կը վարէին ֆալաֆներէն : Այս ազնուամեծար ֆահանայն եօրանասուն տարեկան ծերունագարդ հասակին մէջ կենդանի օրինակ մ'էր ամէն քրիստոնէական յել առաքինութեանց : Վօսրէեան ընտանիքը՝ այս մարդուն յանձնած էր բռնադատելուն այցելութիւն ընելու եւ իրենց առասպածուն պարգեւներն անոնց տանելու պատճօնը :

Այս բարի ֆահանային մարդասիրութիւնն անասնման էր . սակայն չէր ալ ուզեր որ ցաւալի տեսնուցներով եւ հեծեծանքներով զինքն ի գուր շարժեն , այլ կը ջանար խնդրել եւ իմանալ թէ իւրմէ օգնութիւն խնդրողները ինչ պատճառներով բռնադատութեան մէջ ընկղմած էին : Թէ որ յանկարծահաս չարեաց զոհ եղած էին , անկասկած առատ ողորմութիւն կուտար իրենց , բայց եթէ անառակ վարձով կամ գործերնին չգիտնալով եւ կամ անխոհեմութեամբ բռնադատուցել էին , դրամական օգնութենէն աւելի կարեւոր կը համարէր անոնց իւր փրկառիթ խրատուց պարգեւը՝ զոր միշտ կուտար խոնարհ հոգով ,

որոնք նշմարիտ քրիստոնէի յատուկ նշանն է : Երբէք սպառնալից խօսքերով ահաբեկ չէր ընէր եղաւորը , այլ՝ միշտ կը յուսադրէր . ցոյց տալով թէ՛ Աստուած միշտ պատրաստ է զղջացող մեղաւորին ներելու :

Վօսրէեանին բնակարանն առ հասարակ ամենուն ծանօթ եղած էր , ուր երբեւեկողներն անպակաս էին : Այս ընտանեաց ազնուական կենցաղը կարծես թէ Վօկոթիացի գեղացուց բրտութիւնը կերպարանափոխ ըրած էր : Թշուառութեան մէջ ինկող տղանդաւոր անձինք՝ այն տեղ ապահով պատասխարան մը կը գտնային ,

Պ. Վօսրէեան երեւելի երաժիշտ էր . իւր կիներ բնական բանաստեղծութեան ոգի մ'ունէր , եւ շատ անգամ իւր այս ձիրքը բարեպաշտական բանաստեղծութեան կը գործածէր . իւր Լուիզ աղջիկն ալ նկարչութեան հանճարեղ ձիրք մը ունէր :

Պ. Վօսրէեան իրենց պատուանուններովը չարաչար վարուող այն ազնուականներէն չէր , որոնք կը կարծեն թէ իրենց ցեղին ազնուականութիւնը , բարեբաղդութիւնն ու պապերնուն ձգած հարբու-

սուրբներ, իրենց վրայ հարկ չեն դնէր տա-
ղանդներ վաստակելու՝ որոնք մարդս կը
փառաւորեն ու կը զարդարեն. եւ իրենց
վիճակին անվայել՝ անբարոյական ուս-
մանց կը հետեւին: Պ. Վօսրէեան յօժարու-
թեամբ կընդունէր նոր գաղափարները, քէ
որ յեղափոխութեան կուսակցաց անտառակ
ընթացքն ու անկարգութիւնները՝ զինքը
չվախցրնէին հասարակաց գործերուն մի-
ջամուխ ըլլալէ, վասն զի չէր ուզեր մեղ-
սակից ըլլալ անոնց՝ որոնց գործերուն ի
արեւ չէր հաներ: Վեհանձն եւ միանգա-
մայն անձնուէր էր. անխնայ կընդունէր իւր
հիւրընկալ եղի՞քին տակ նաեւ մասամբ
եւ իցէ մահապարտները: Հալածեալ Քա-
հանայն, հասարակապետականը, որուն դէմ
ամենաձանձ սոսկալի վեճիւններ արձակած
էին, իւր ամրոցին մէջ ապահով պատրու-
պարան մը գտած էր, ուր բռնաւորութեան
մխիթարիչ ամէն պէտք եղած մարդասի-
րութիւնները կը վայելէր:

Իւր վեհանձն զբոսբեամբն ու մարդա-
սիրութեամբը հիւրընկալած մարդոց մէջ կը
գտնուէր նաեւ Նորատնեան ասպետը, որ

համբաւը կորսնցուցած, սնանկացած, ան-
տանն խաղացող, եւ չափազանց անա-
ռակ մարդ մըն էր: Արեւունեաց ու ազ-
նուականաց դասէն՝ որոց նախասինքն էր՝
վրձնուելով, ասելութեան ու վրէժխնդրու-
թեան հոգում զնաց միաբանեցաւ ժաֆօ-
պիւններուն հետ: Լիւր չարախօսն՝ անմեղ
զոհ մը սպանութեան մատնած էր արդէն:
Երբ դատապարտութեան կարգն իրեն եկաւ,
վասութեամբ փախչելով եկաւ Պ. Վօսրէ-
եանէն պատսպարելու տեղ խնդրել: Կոմ-
սը զինքը մեծարանօք ընդունեց, եւ խաբ-
ուեցաւ անոր հետեալուր խօսքերէն:

Այս կեղծաւորը արտաբնական գերաշխար-
հիկ առաքինութեան կերպարանք մը ցոյց
կուտար, եւ խօսիւ կորոտար ժաֆօպիւնե-
րուն դէմ. զինքը ազնուականութեան
բռնամիներէն զոհ եղած կը կարծեցընէր,
եւ Վանսէնեանին կուսակիցներուն հետ
դարձեալ միաբանելու վեճ դիտարորութիւն
մը կը ցուցընէր: Իւր խօսքերուն մէջ
քաղաւորը պաշտպանելու մասին տարա-
պայման ջանք մը կը տեսնուէր, նա եւ իւր
հասարակապետականներուն դէմ սնուցած

հակառակութիւնը վերջին աստիճան խիստ էին, այնպէս որ Պ. Վօսրէեան կը ջանար իւր իմաստուն խօսքերովն անոր եռանդը մեղմացնել, զինքը միշտ իւր ծաղկահասակ բարեկամը անուանելով:

Նորասունեան իւր արժին մէջ առանց մոլեկան կրից բոց մը զգալու՝ կարող չէր շնորհալի Լուիզին զմայլեցուցիչ գեղեցկութիւնը տեսնելու. այս ազնիւ աղջիկը դեռ տասնեւեօթը տարեկան էր. եւ որովհետեւ Պ. Վօսրէեանին մէկհասիկ գաւազն էր, ուստի ուզեց Նորասունեանն անոր հետ ամուսնանալ, որպէսզի իւր խորհուրդները կարենայ գործադրել: Մեծ յարգանք էր բարեկամութիւն կը ցուցունէր Լուիզին, որոնց վրայ Լուիզ ոչ միայն չէր հեշտանար՝ այլ նաեւ զգուսնօք կը սուսկար անոր բանեցուցած ձեւերէն ու շարժումներէն, եւ միշտ իւր հետը կ'ստակներով ու ակնկալութեամբ կը խօսէր, որոնք պարզ մեծցած աղջկան մը սէրն իրեն յանգուցանելու յարմար միջոցներ չէին:

Այս մարդը՝ կարծելով թէ Լուիզին հանութիւնը ձեռք բերած է իրեն հետ ամուս-

նանալու, զնայ զտա Պ. Վօսրէեանն եւ խնդրեց որ իւր աղջկանը հետ պսակուի:

Բարեկամս, ըսաւ իրեն կոմսը, ուրախութեամբ պիտի տեսնեմ քու իմ սիրելի Լուիզիս փեսայանալը, ինչու որ քու վրադ զայ իմ ընտրութեանս յարմար բարի յակութիւններ: Բայց առանց իրեն հանութեան չեմ կրնար իւր ձեռքը քեզի տալ: Ասուած եղիսարեքի սիրոյն համար չնուիրեց ինձ այս ազնիւ գրաւականը՝ որպէսզի սիրքը չսիրած անձի մը հետ ամուսնացնելով՝ զինքը մտնջեցնաւոր վիշտերու եւ քրտուառութեան դատապարտեմ:

Ասպէսը՝ իւր յաղթութեանը վրայ ապահով ըլլալով՝ հանեցաւ որ Լուիզին հարցուի:

Պ. Վօսրէեան առաւօտուն ժողովեց իւր ընտանիքը, որոնց հետ միաբանեց նաեւ Կրանդշանի վանահայրը, եւ յայտնեց իրենց ասպետին խնդիրը. չափազանց խօսքերով գովեց Նորասունեանը, բարձրացուց. վասն զի անանկ համոզուած էր թէ, նոյն իսկ առաքինութիւնն էր այս մարդը:

Եղիսարէք իւր աղջկանն երեսը կը դիտէր, հասկնալու համար աչքերէն թէ այս

առաջարկութեան վրայ ինչ կը մտածէր :
Լուիզին երեսը մոխիր դարձեր էր, եւ սք-
հանութեան ու խոժոռութեան նշաններ կը
սեւնուէր, որոնք այս անակնկալ խնդիրը
իրեն կը պատահուէր : Իւր բարեպաշտ
եւս Վօսրէեանին նման Նորասունեանին
կեղծաւորութենէն խաբուելով, այս ամուս-
նութիւնը՝ իրենց ընտանեաց հաստատու
եղանկութեան գրաւականը կը համարէր :

Իմ սիրելի Լուիզս, ըսաւ իւր աղջկանը,
Նորասունեանը կը հանի քեզի փեսայա-
նալ : Լուիզ կարմրելով առջին նայեցաւ,
եւ քանի մը դժուարիմաց խօսքեր բոբովեց :

Այն ասեմն Կրանդսանի վանահայրը սկը-
սաւ խօսիլ, եւ կոմսին ու կոմսուհոյն
ուղղելով իւր խօսքերն՝ ըսաւ, եւ վրաս
կառնում Լուիզին սեղ պատասխանել : Ես
ինքս քննեցի իմացայ այս ասպետը, եւ
չեմ կրնար ձեր վրայ ներգործած սխալաց-
մանը մասնակից ըլլալ : Ճանչցայ անոր
խորամանկութեան ու կեղծաւորութեան
անյատակ խորութիւնը : Այն առաջինու-
թիւններն ու խստամբեր վարեն՝ որ ցոյց
կուտայ, սարսափելի մոլութեանց կեղծիք

են, որոնք միշտ վնասակար նպատակ մը
ունին : Իւր չափազանց կեղծաւորութեամբ
բարեպաշտանալը՝ պարզամիտները խաբե-
լու համար արուեստակեալ ճարտարութիւն
մըն է : Յայտնի ու բարձրագոյն անկրօ-
նութիւնն արհամարհելի է, բայց կեղծա-
ւորին խաբէութեանը չափ վստահաւոր չէ.
Վասն զի առաջինութեան դիմակը կրելով
կրնայ զեզ դիւրաւ քակարդի մէջ ձգել :

Պատասխան տուաւ Պ. Վօսրէեան, պատ-
ուելի հայրս, զիսեւ անուշտ որ քու խը-
րաններուդ կը հնազանդիմ, բայց այս պա-
րագայիս մէջ ես զիս կարող կը կարծեմ
ներհակելու այն ծուռ կարծեաց՝ որուն
ենքակայ եղած է Պ. ասպետը : Իւր մեր
ընտանեաց հետ ունեցած տեսութեանցը մէջ՝
միշտ շնորհալի ու ամենախղիւր հանգի-
սացաւ, չեմ կրնար երեւակայել թէ այն-
չափ բարեկից մահուր վարէի մը մէջ ասպ-
կանեալ սիրտ մը պահուած ըլլայ :

Պ. Վօսրէեանի հետ ամենքն ալ՝ վանա-
հայրն ասպետէն աւելի անաչառ դատելով՝
պարտաւորեցան ծերունոյն խրատուցը
ունկնդիր ըլլալ, որովհետեւ մինչեւ որ բա-

նի մը վրայ աղէկ ֆննուքիւն չընէր՝ յա-
ռաջ չէր բերեր:

Իմ սիրելի՛ Եղիսաբեթս, ըսաւ կոմսն
իւր կնոջը, որոշում մը գոյացրնելէ առաջ
հարցրնենք մեր Լուիզին. քէ որ ասպէսն
իրեն հանելի չէ, ի բաց վանենք այս խոր-
հուրդը, որ քէպէտ հեռուէն մեզի երջանիկ
բարեբաղդութիւն մը կը ներկայացրնէ՝
բայց կրնայ ըլլալ որ ժամանակ անցնելով
մեզի աղի արսասուտ քափել տայ:

Լուիզ Կրանդշանի վանահօր ներկայու-
թենէն արտօսելով՝ պատասխան տուաւ իւր
հօրը: Վերջին ծայր ներհակութիւն մը
զգացած եմ ասպէսին վրայ. իւր խեղրփ-
ցած շարժումները, խաղապատասանները,
լեզուին մէջ գործածած կեղծ բարեձեւու-
թիւններն ու շինծու ֆաղցրութիւնը, սեռ-
պարծութիւնը՝ որով ճաննն ուղտ կընէ իւր
յարգը ցոյց տալու համար, իւր ըրած մանր
մունր բարեբարութեանց ընծայած փառքն,
ամենամեծ պատհարներ են զինքն ինձի
ասելի ընելու, եւ իրմէ զզուելու: Ուստի
ամուսնութեան մը դաշնադրութեան եր-
կիւղը՝ որ քեզ ու զիս բռնառ պիտի ընէր,

հարկադրեց զիս յայտնելու քէ, երբէք չեմ
ուզեր ձեռքս անոր տալ:

Կրանդշանի վանահօր նայուածքն իմա-
ցուց Լուիզին քէ գոհ էր իւր հաստատա-
մտութենէն, եւ ժամանակ անցնելով պի-
տի վասկէր իւր դասը:

Երկար ֆննութիւններէ ետք՝ որոց ամէնքն
ալ նպատասաւոր չէին ասպէսին, որոշուե-
ցաւ որ պատասխան տրուի ասպէսին քէ,
Լուիզ դեռ տղայ ըլլալով՝ ժամանակը չէ
ամուսնանալու. եւ քերեւս ժամանակէ մը
ետք իւր խնդիրն ընդունելի ըլլայ դեռա-
բուսիկ աղջկան:

Պ. Վօսրէեան ժողովէն ելնելով ասպէսը
փնտռելու գնաց, որ սրահը կը շրջագա-
լէր՝ եւ երկիւղներ կը յլանար կոմսին
յուշիկ ֆայլերը դիտելով, որնոր պատասխան
կը բերէր իրեն. եւ իսկոյն հասկցաւ անոր
զգուշաւոր կերպարանքէն՝ որ իւր խոր-
հուրդը չէր յաջողած, ուստի եւ իւր խընդ-
րոյն մերժուսը պաղ կերպով ընդունեց:

Հետեւեալ օրն առաւօտուն կանուխ եւ
ոչ մէկուն մնաք բարով չըրած՝ բողոց
ամրոցն ու զնաց եքինալ, եւ իւր լրեսու-

ներէն մէկուն ձեռով՝ ի նպաստ իրեն՝ հասարակապետական ասեանին դիտարուրքիւնները քննել իմանալէ ետք, Վոսրէեան կոմսէն վրէժ անելու համար որոշեց իւր դժոխային խորհուրդն ի գործ դնել :

Փութաց՝ կոմսը եղեռնադատ ասեանին ամբասանել, պատճառ բռնելով թէ կոմսը միաբանած է զօրաց գլխաւորներուն հետ, եւ թէ ինքն ուրիշ բանի համար չէր բողոքեց ամրոցը, բայց միայն կոմսին քախանձանկներէն ազատելու համար. որ իբր թէ զինքը բազաւորականներուն մէջ ծառայութիւններ ընելու ստիպած ըլլար :

Ժողովոյն նախագահն՝ որ պատրաստած զոհերուն բռնովը իւր ծառայութիւնները կաւեյցընէր, աւելի օգտակար կը համարէր զինքն, երբ բարձրագոյն կարգէ անձ մը իւր մահաբեր նանկը ձգէր :

Անմիջապէս մտրդ զրկեց ամրոցը պատարելու, եւ բանտարգել տուաւ Վոսրէեանն ու Կրանդշանի վանահայրը, որուն համար ես՝ իբրեւ կոմսին մեղսակից ընկերը՝ ամբասանութիւն եղած էր :

Այս անակնկալ դիպումսն ամրոցին բնակիչները խորին ցաւոց մէջ ընկողմեց, եւ կոմսին հպատակներն անոր բանտարկիլն իմանալով՝ չկրցան իրենց արտուրբ բռնել :

Այս աղէտալի դիպումսն հետեւալ օրը՝ անհնարին սուգ տիրած էր ամրոցին մէջ : Գիշերը հասաւ. կոմսուհին եւ իւր աղջիկը անդադար կուլային :

Երեկոյեան ժամը քանակութիւն, բերդապահն եկաւ իմաց տուաւ նորատնեանին զալը, որ զարհուրած դէմքով մը սրահը մտաւ, եւ ըսաւ կոմսուհոյն :

Յաւ ի սիրտ իմացայ, Տիկին, հու պակակցիդ բանտարգութիւնը, եւ կուգամ այս սրտմայի պարագային մէջ իմ ծառայութիւններս քեզ մատուցանելու :

Պ. Ասպետ, պտուց կոմսուհին, դու գիտես որ իմ այս յանձանք չունի :

— Վերջին աստիճան ծանր կասկածներու տակ ինկաւ, եւ ես՝ նմարիս պատժապատր կը նանչնամ զինքը :

— Ի՞նչպէս պատժապատր կը նանչնաւ զինքը, Պարոն. դու երկար ժամանակ մեր

մէջը չկեցան, չսեանք որ մենք հասարակաց գերծերուն չէինք խառնուեր, այլ միայն պասահած աղէտից վրայ կուլայինք, որոնք մեր հայրենիքը բռնառուրեան կը մասնէին :

— Իւր քաղաւորաց հետ ունեցած բարեկամութիւնը իմացուելով՝ պասասխանեց ասպէսը, ժողովն իւր գաղափարներուն վրայ կասկածի գնաց. սակայն դեռ իւր ազատութեան յոյսը կտրուած չէ, եւ իմ ազդեցութեամբս կրնամ ժողովը բարեկամացրնել :

Ո՛հ, երանի քէ կտտենայիր, աղաղակեց Լուիզ, որչափ երախտագէտ կըլլայինք քեզի:

Գեղեցիկը Լուիզ, ըսաւ այն աստե՛ն ասպէսը, այս կարեւոր ծառայութեանս մրցանակ մը կը պահանջեմ :

Ինչ որ ուզես՝ կը շնորհուի քեզ, ըսաւ կոմսուհին :

Սիրուն աղջկանը ձեռքը կուզեմ :

Սիրուն աղջկանս ձեռքը :

Հրամարես, սիկին, այս գնով միայն կը հանիմ ժողովոյ նախագահին գրութիւնը քու էրկանը վրայ հրաւիրել :

Լուիզ այս պայմանը լսելով գունատեցաւ եւ մարելիք եկաւ վրան, բայց իւր հօրն ազատութեան յոյսը՝ զինքը գորացուց, եւ խնդրեց ասպէսէն որ ասոր վրայ մտածելու համար գիշեր մը ժամանակ սայիրեն :

Նորասունեանը քառուեցաւ գնաց եւ խօսք տուաւ հետեւեալ առաւօտուն գալ : Իւր նողկալի խորհուրդն էր Լուիզի հետ պակուելով՝ անոր անհամար ինչքերուն տէր ըլլալ եւ մահուան դատապարտութեան մասնել կոմսն ու վանահայրը՝ որ իւր կամացը դէմ կեցած էին :

Ասպէսի երթալէն ետքը Լուիզ նետուեցաւ մօրը զիրկը, եւ ըսաւ իրեն, հօրս ազատութեանը ուրիշ նաւ մը չկրնայիմ գտնել՝ ասպէսին խնդրոյն հաւանութիւն տալ կը մըտաբերեմ :

Քանի մը վայրկեանէն ետքը մարդ մը առանց իմաց տալու սրահը մտաւ եւ կնքեալ բուրք մը կոմսուհւոյն տալով՝ ետ քառուեցաւ գնաց :

Վօտրեան սիկինն արտօնօք բացաւ նամակն եւ հետեւեալը կարդաց :

«Իմ սիրելի բարեկամս, Աստուած փուհասասամսուքիւնդ փորձել ուզելով՝ զիս իրեն կը կոչէ՝ քեզ երկրիս վրայ մինակ բողով. արդէն իմ մահուանս վե՛րս սրուեցաւ: Զիս ամբասանողը Նորասունեան ասպետն է: Մի վստահիւր անոր: Այս նամակը վերջինն է որ ինձմէ կընդունիս:

Մնաց բարով իմ սիրելի եղիաբարքս. մնաց բարով եւ դու իմ սիրելի Լուիզս: Մեզի համար մարդոց արգարութեանէն յոյս չկայ: Երկինք դարձեալ իրար կը տեսնենք: Աստուած պիտի վարձատրէ մեր առաքինութիւնները: Գարձեալ մնաց բարեաւ եւ խաղաղութեամբ .

ՇԱՐԼԷԶ ՎՕՏՐԷԷԱՆ »:

Այս նամակը սարսափեցուց կոմսուհին, եւ յորդորեց իւր աղջիկն որ անօգուտ զոհ մը չկատարէ, հանելով այնպիսի մարդու մը խնդրոյն՝ որ իրենց ընտանեացը կորստեանը վրայ եղուած էր:

Այն ինչ արեւը սկսած էր նախարձակ նառագայթներովը լուսաւորել երկնաբերձ լեռանց արածայր գագաթը: Իմաց տուեցաւ

ասպետին գայր: Այս անգամ առջի օրուան պէս խոնարհ կերպարանով շերեւցաւ նա, այլ խիստ դէմքով մը՝ որ իւր յաղբուքեանը վրայ անեղկեւան ըլլալը կը յայտնէր:

Վօտրէեան սիկիւնն անոր ժամանակ չը բողուց, եւ շուտ մը իւր էրկանը դրկած նամակն անոր մասոյց:

Ասպետը վայրկեան մը իւր վե՛ն կերպարանքը կորսնցուց, բայց ինքզինք զսպելու սովորած ըլլալով, բարկացած ձեւանալով ըսաւ կոմսուհւոյն. այս սոսկալի զրպարտութիւն մըն է, եւ ես փու պսակակցիդ տեղ իմ արիւնս քափելու պատրաստ եմ, քէ որ հարկ ըլլայ, ես իմ անձս կը նուիրեմ իւր կեանքն ազատելու համար:

Գնա, Պարոն, ըսաւ իրեն կոմսուհին, գնա իմ՝ աշխարհիս մէջ ամէնէն սիրելիիս արիւնովը շախաղած ձեռքովդ աղջկանս ձեռքը խնդրելու կուգաս: Ես հասկցայ փու զարհուրելի միտքդ, սակայն նախամեծար պիտի սեպեմ ամէն չարիք կրել, քան քէ փու օգնութիւնդ խնդրել: Կորիք, ի բնն զնա, եթէ ոչ բռնութեամբ հանել կուտամ քեզ ամրոցէն, որուն դեռ տէրը չես: Բայց քէ որ

յաջողիս մեր կողոպուցներովն հարսանաւ, քեզի մարգարէաբար կիմացունենմ որ՝ ամէն բարի մարդոց ասելուքիւնն ու արհամարհանքը հետզ պիտի ունենաս որոնք զեզ մշնջենապէս պիտի խայրեն :

Ասպէսն ուզեց պատասխան սալ, բայց կոմսուհւոյն վեհ շարժումը պատանձեցուց զանի. վասն զի առաքինութեան ազդուութիւնը զօրաւոր է՝ որուն չկրցաւ դէմ կենալ, եւ առանց պատասխան մը կարենալ տալու՝ բոլորովին այլալիւծ դուրս ելաւ. ուրկէ անմիջապէս էքիւնալ զնաց Վօսրէեանին դատաստանը փութացրնելու :

Ասպէսին անհամբերութեամբ սպասած ու բանտարգելոյն ընտանեաց ամենազարհուրելի օրը վերջապէս հասաւ : Ժողովին նախագահն արհամարհեց կոմսին արդար փաստերը : Առաքինութիւնն ու բարեարութիւնը՝ որոնք իւր կենաց հաստատուն սանձանն էին, ազդեցութիւն մը չունեցան ժողովոյն ասեանին առջեւ : Միայն ասպէսին խօսքերը լսուեցան, եւ կոմսն ու Կրանդաւնի մեծարգոյ վանահայրն ի մահ դատարարուեցան :

Երկու բանտարգելներն դարձեալ իրենց ստերերեայ խաւարային բանջը տարուեցան, ուր իրենց վնասոյն գործադրութեանը կապասէին, որն որ հետեւեալ օրն ի գործ պիտի դրուէր :

Ասպէսն՝ իբր վարձ իւր ծառայութեանց՝ զորոնք կը ջանար զուցունել քէ հասարակապետութեան մասուցած էր, խնդրեց որ կոմսին ամբողջ իրեն տրուի. խոստացան սալ, եւ իշխանութիւն ալ առաւ ամբողջ բնակելու :

Ասպէսը փառաւոր յաղթանակող մարդու մը պէս՝ քանի մը յափեսակութեան ծարաւի թռուառներ ժողովեց, եւ բերաւ զանոնք Վօսրէեանին ամբողջ : Կոմսուհին եւ իւր աղջիկը անոնց մօտեալը տեսնելով՝ ժողովեցին իրենց ծանրագին ազնիւ գոհարները եւ փութացին փախչիլ. զացին պատսպարեցան ձերունի որսորդապետ Յովսէփին տունը որ անտառին մէջ խախտւել խրնիքի մը տակ իւր կնոջը հետ կը բնակէր :

Իբրեւ յաղթանակող՝ ասպէսն ամբողջն մէջ մտաւ, եւ առատանտնօրէն վարձատրեց այն մարդիկը՝ որոնք այս գեղին

աշխարհակալութեան մէջ իրեն օգնած էին: Հաստատեցաւ հոն, եւ կուսակիցներուն զազարի կերուխում մը տարով՝ իւր խորհուրդներուն յաջող ելին անոնց հռչակեց:

Վօսրէեանին կիներն ու աղջիկը իրենց ժամանակն լալով ու աղօթելով կանցրեցին, խնդրելով յԱսուծոյ որ հանի իրենց օգնութեան հասնիլ, եւ փրկէ կոմսը զըլխասութեան մօտալուս վճանգէն: Իրենց այս ծանրաբախիժ սրտութեան ասեմ յանկարծ վեր ցատկեց Լուիզ աղաղակելով, մայր իմ, հայրս պիտի ազատի: Ահա ես կերքամ էքինալ, եւ քէ որ Ասուած իմ խորհուրդս յաջողէ, իրիկուն չեղած զինքը քու բեւերուդ մէջ կը գտնես:

Սիրելի զաւակս, ըսաւ կոմսուհին արտի եռանդեամբ, քննչպէս կը յուսաս որ այս բանն յաջողի:

Ես գիտեմ ընելիքս, սիրելի մայրս, Ասուած կը ներճնէ ինձի, ուստի կարող պիտի ըլլամ հայրս ազատել, եւ ի հարկէ Այն որ կը հսկէ անմեղաց պաշտպանութեանը վրայ՝ ձեռնու պիտի ըլլայ ինձ այս բարեպաշտական ջանիցս մէջ:

Յովսէփ, ըսաւ Լուիզ ծերունի որսորդապետին, քու որդոյդ վերարկուն ու լայնաբերանակ փեղոյրը փոխ տուր ինձի, վասն զի պէտք է որ ծպտեալ կերպարանով երբամ էքինալ, որպէսզի ամենեւին մէկը չկարողանայ զիս նանաչել, եւ այս ծպտեալ կերպարանով ամէն բեւեմներէ ազատ պիտի մնամ:

Ի՞նչ չգացած պլլուեցաւ իւր մօրը ծունկերուն եւ անոր օրհնութիւնը խնդրեց ըսելով, սիրելի մայրս, օրհնէ քու զաւակդ. քէ որ ես ալ այս փորձութեանը մէջ իյնամ, բայց է որ Ասուած այնպէս կը կամի, քոյ իւր սուրբ կամքը կատարուի:

Կոմսուհին աղի արցունքներ քափելով գրկեց Լուիզը, եւ համբուրեց զանի: Գնաց ծաղկահասակ աղջիկը առանց իմաց տալու քէ՛ ինչպէս կը յուսար կոմսն ազատել: Վօսրէեան տիկինը բոլոր օրը Քրիստոսի պատկերին առջեւ ծունկի վրայ եկած կը խնդրէր Ասուծմէ որ իւր խորհրդոցը մէջօգնէ անոր:

Գիշերը եկաւ հասաւ, եւ դեռ Լուիզը չերեցաւ: Կոմսուհին անհնարին անձկու-

քեամբ կը հառաչէր, եւ ամէն մէկ վայր-
կեցին Յովսէփը կը դրկէր՝ որ երբայ քան-
բուն վրայ անոր գալը դիտէ : Որտեղայե-
տին բնակած անտառին կէս գիշերուան
ժամը զարկաւ, եւ դեռ մէկը երեւան չե-
լաւ : Քիչ մը ետք պատահանի փեղկին քա-
նի մը քեթեւ հարուածներ տուեցան : Մեր
Յովսէփը կոմսուհոյն հետ դուրս ելաւ,
եւ նոյն վայրկեցին կոմսուհին իւր այրը
քեւեռուն մէջ զտաւ . Վօտէեան սիկիւնն
ողջունեց զինքը գորովայր սիրով, եւ
հարցուց իրեն քէ մը է իւր աղջիկը :

Կոմսը լռեց եւ սկսաւ յորդառաս ար-
ցունք բափել :

Հարցուց իրեն դարձեալ կոմսուհին, Աս-
տուծոյ սիրուն ըլլայ, քսէ ինձի, ինչ եղաւ :

Ո՛վ իմ վեհանձն զուակս, երանի քէ
կարենաս չզոջալ քու դիւցազնական անձ-
նանուիրութեանդ վրայ . Տէրը յաջողէ քու
խորհուրդդ : Մտիկ ըրէ, սիրելի եղիսաբերս,
այս իրիկուն բանտապետն եկաւ ինձի
իմաց տալու քէ անձանօք մէկը հասարա-
կապեակն ժողովոյ նախագահէն հրա-
ման ունենալով՝ կուզէ ինձի հետ ծածկա-

բար տեսութիւն ընել : Տեսայ սեւորակ վե-
րարկու հագած մէկու մը ներս մտնելը,
որոյ փեղայրին լայն շրջանակը երեսը
կը գոցեր : Երբ միմակ մնացինք, օտարա-
կանը գիրկս նետեցաւ, եւ հանչցայ աղ-
ջիկս :

Հայրս, քսաւ ինձի, ժամանակ մի կոր-
սընցրներ, ազատիլը նայէ. եւ բանտա-
պետը ձեռք առած եմ, պիտի բողու քեզի
դուրս ելնել : Գնա միաբանէ իմ մօրս հետ՝
որ այս վայրկեցիս ծերունի Յովսէփին
տեսակը կը գտնուի : Եւ իմ բռնուելէս ի վե-
րնչ որ եղած գացած էր ամբողջն մէջ,
պատմեց ինձի : Երբ պատմութիւնը լմցուց,
ըսի իրեն, եւ պատասխատ եմ երբալու դու
ալ ետեւէս եկու : Բայս վեհանձն զուակն
իւր հագած երկայն վերարկուն ինձի հագ-
ցուց եւ գլխուն փեղայրը՝ որ երեսը կը
ծածկէր, իմ գլուխս դրաւ, եւ քսաւ ին-
ձի, քու ազատութիւնդ՝ եւ քու տեղը կե-
նալու պայմանաւ ձեռք բերած եմ :

Ինչ որ իւր խորհուրդը փոխելու համար
կրնայի ընել՝ ըրի, բայց ամենեւին մտիկ
չըրաւ . իւր կամացը զիջանելու հարկադ-

րեցայ : Արդ որովհետեւ հիմա միաբանած եմք , պէտք է որ փախչելով ժամ մը յառաջ ջանանք Հեղվեհիա հասնիլ : Ամիս մը կենանք Ֆրիպուրկի մէջ , Աստուած ինք փրկէ մեր սիրելի Լուիզը մահուանէ . այն տեղ կը բողոքում եեզ երբալ գտնել զինքը :

Կոմսուհին այս վերջին խօսքերը լսելուն՝ մարեցաւ . սասկամորմոք գաւը զինքը բոլորովին անզգայ ըրած էր : Այրն ըսաւ իրեն , ժամանակը մեզի համար շատ կարեւոր է , պէտք է որ առանց վայրկեան մը անցընելու ճանքայ ելնենք :

Երեք օր լեռներուն մէջ տեղէն փախչելով հասան Ռէն գետին հով , եւ անմիջապէս գացին Ֆրիպուրկ հաղաքը , ուր անհնարին անձկութեամբ էքիմալէն նոր լուրերու կսպասէին :

Կոմսին փախստեան հետեւեալ օրը՝ ժողովուրդը խուճած էր այն տեղ՝ ուր մահապարտից իսուր տախտակամածը կանգներ էին , եւ ուր անհամբերութեամբ մահապարտից գալստեանը կը սպասէին :


Հասան վերջապէս : Կրանդշանի վանահայրն առջեւէն կերբար , եւ անոր ե-

տեւէն Լուիզ մեռելասխիպ դէմքով , բայց արիութեամբ : էքիմալի շրջագայ գեղացիները որոնց ամէնն ալ Վօսրէեան ընտանիքին բարեբարութիւնները վայելած էին , անոր դէպ ի մահապարտից տախտակամածն ուղղիլը տեսնելով՝ չկրցան իրենց զայրացման տեսուելը զսպել : Ելաւ հոն ծաղկահասակ աղջիկը , եւ խնդրեց որ հաւաքեալ ժողովրդեան ֆանի մը խօսք խօսելու համար բոյսուութիւն ըլլայ իրեն : Բնակիչներուն արդար ցասումէն վախճալով՝ այս շնորհն իրեն պարգեւեցաւ :

Այն ատեն Լուիզ երեսը ժողովրդեան դարձընելով ըսաւ մեղմօրէն : Բնակիչներ , ես ամենավատ մասնութեան մը զոհ կրլլամ , բայց զոհ կը մեռնիմ , վասն զի իմ կենացս պատճառը կարող եղայ ազատել : Դուք ամէնեղ՝ որ ունկնդիր կրլլաք ինձ , կը նանչնաք Վօսրէեան ընտանիքը : Ձեր մէջէն ոմանք՝ որոց դէմքն ինձի ծանօթ են , գիտեն մեր ընտանեաց բարեգործութիւնները . արդ՝ կը խնդրեմ աղաչանօք՝ որ անպատիժ չբողոք գայն , որ մեր կորստեանը պատճառ եղաւ : Նորասունեան աս-

պէսը կրսեմ , որ այսօր իմ նախնեացս
ամրոցը կը բնակի . իւր կենաց փրկու-
թիւնն իմ հօրս հիւրասիրութեանը պարսա-
ւորելէն յետոյ՝ միտքը դրաւ որ՝ իմ ընտան-
եացս ինչքեանն տէր ըլլալու համար ինծի
հետ պսակուի : Հայրս՝ իմ բժուատութեանս
ընկերակից մեծարգոյ վանահօր յարատմն՝
անոր խնդիրը մերժեց . առոր վրայ զայ-
րանալով՝ մեր ընտանեաց կորսեանը հե-
տամուտ եղաւ , ու զնաց խաբէութեամբ
հայրս ամբաստանելով զինքը մահուան
դասապարտել տուաւ : Որովհետեւ ես էի
հօրս աղէտիցը պատճառ , չուզեցի որ ին-
ծի համար կորսուի , եւ խաբէլով վերա-
կացու բանապէսը՝ իւր տեղը բռնեցի :
Մնաք բարով բնակիչներ : Աղաչեցէք հոգ-
ւոյս հանգստեանը համար . ես երջանիկ
կը մեռնիմ , վասն զի հայրս ազատեցի :

Ծաղկահասակ աղջկան խօսքերը բազ-
մութեան սրտերն ի գորով շարժեցին : Եւ
այն վայրկեանին՝ որ դահիճը զինքը մահա-
բեր փայտաթիւ կապելու կը պատրասուէր ,
ժողովուրդը մագլցի աստիճաններէն վեր ել-
նելով Լուիզն ու վանահայրը յափօսակեցին :



Գործաւորներու փոքրիկ բազմութիւն
մը՝ ազնուականաց մահը խնդրելուն չը
նայելով՝ յաղթանակաւ տարին զիրենք
մինչեւ քաղաքին դուռը . ծաղկահասակ
Լուիզն ու վանահայրը դուռս ելան էքի-
նալէն , եւ կառք մը՝ որ կը սպասէր իրենց՝
կայծակի նման արագութեամբ տարաւ զի-
րենք : Այս դիպումը երէք օր ետքը Ֆրի-
պուրկ քաղաքը հասան :

Նորասունեան ասպետը ընդ երկար չը
վայելեց իւր անխրատութեամբ ձեռք բերած
բարութիւնները : Կոմսին հպատակները
բազմութեամբ ամրոց եկան , առին զայն
ձեռքէն , եւ զինքն իւր երկու անտակ
ընկերներովը մէկտեղ շարժական կամուր-
ջին վանդակէն կախեցին : Քաւառին մե-
ծամեծները ժողովեցան եւ ամրոցը ի վա-
նառ հանելով՝ իբրեւ ազգային ստացուած
զայն ծախու առին , որ ժամանակէ մը
յետոյ իւր բնիկ տէրը երէք վերադառնայ՝
դարձեալ անոր յանձնեն :

Վօտէեան ընտանեաց վեհանձնական
բարեգործութիւնները չկորսուեցան : Երբ
Նարոլէոն յարոտ նստաւ , Վօտէեան կոմ-

սը վերադարձաւ Գաղիա . եւ ոչ միայն
նորընտի կայսեր շնորհիւ իւր ինչքերը ստա-
նալու բերկրութիւնն ունեցաւ , այլ նաեւ
իւր վերադարձը տօնախմբութեան օր մը ե-
ղաւ իւր կոմսութեան բարի բնակչացը հա-
մար :

Լուիզ վերադարձին աւելի եւս գե-
ղեցկացեր էր . քիչ ժամանակէն յետոյ մօ-
տաւոր տեղերէն ազնիւ ընտանի մը տղուն
հետ ամուսնացաւ՝ որ իւր բարեստութեամբն
ու ազնիւ զգացումներովն իրեն արժանա-
ւոր փեսայ մը եղաւ : Կրանդշանի վանա-
հայրը այս երկու ծաղկահասակ անձանց
պսակը օրհնեց, եւ քիչ ասեցէն վախճա-
նեցաւ՝ իւր հետք գրեցման տանելով բա-
րեկամաց վիշտերը : Պ. Վօսրէեան միշտ անձ-
նապահ եղաւ հնարհներէ՝ որ կը յուզուէին
մայրաքաղաքին մէջ . եւ իւր կենաց մնա-
ցորդն իւր մարդոց բարօրութեանն ու եր-
ջանկութեանը նուիրեց :



